

8788

Ա. ԼԻՍՏՅԱՆ

ՀԱՅՐԵՆԻ
ԱՌԱՍԻՆԵԼԵՐԻՑ
ՅԵԿ
ՎԵՐԱԲԵՐԻՑ



9(7.325)

L-61

ՀԱՅՐԵՆԻՑ

9(47.925)

L-61

Աղոթական գրաւուր

2011-09
21 AUG 2001

Ա. ԼԻՍԻՑԱՆ

ՀԱՅՐԵՆԻ ԱՌԱՍՊԵԼՆԵՐԻՑ
ՅԵՎ
ՎԵՊԵՐԻՑ

ՀԱՅԹԵՏՀՐԱՑ
ՅԵՐԵՎԱՆ

1940

3 MAY

8788

Պատ. Խմբագիր՝ Դ. Քաջախյան
 Տեխ. Խմբագիր՝ Ան. Գասպարյան
 Սրբագրիչ՝ Ռ. Փալսաղյան

СТ. ЛИСИЦИАН
 ИЗ РОДНЫХ ЛЕГЕНД
 И ПРЕДАНИЙ
 Гиз Арм. ССР, Ереван, 1940 г.



3558
40

Դրավիլիսի Մազմա՞ Բ-1094 Հրատ. 5143.
 Պատմեր 89, Տիրաժ 3000.
 Թուղթ 62×94, Տպագրական 6½ մմ.
 Մեկ մամուլում 24.480 սշան.
 Հանձնված ե արտադրության 21 հունվարի 1940 թ.
 Ստորագրված ե տպագր. համար 7 մարտի 1940 թ.
 Հայպետհրատի տպարան, Յերևան, Լենինի, 65.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գուռան	5
Զրհեղեղ	10
✓ Հայկ և Բել	16
- ✓ Արամ	25
✓ Շամիրամ և Արա Գեղեցիկ	34
✓ Տիգրան Յերվանդյան	46
Վահագն	56
✓ Վաղարշակ	63
Արտաշես Ա. աշխարհակալ	73
Յերվանդ Արշակունի և Սմբատ Բյուրաստյան	76
✓ Արտաշես Բ. և Արտավազդ	87

ԳՈՒԱԱՆ

Նավասարդի տոնն ե. Նոր տարի յե: Մըջունների պես վիտում են ուխտավորները Բաղրևանդ զավառի*) Բագավանում և ջերմ յերախտագիտությամբ փառաբանում են Վանատուր աստծուն: Նրանք հավաքվել են հեռու տեղերից, վոր նրա նվիրական մեհյանում (հեթանոսական տաճարում) սրտաբուղս զոհերով պատվեն Ամենաքեր աստծուն, նրան, ով առատ հունձ ե պարգևել արտերին և լիություն ե տվել այգիներին:

Ծաղիկներով և նորահաս պտուղներով զարդարված ե կուռքի սեղանը, յերկարագեստ քուրմերը անուշանոտ խունկ են ծխում, զոհեր են մատուցում և ջրհեղեղի հիշատակին ջուր են սրսկում ժողովրդի վրա ու աղավնիներ թոցնում: Ամբոխը հետեւգում ե նրանց որինակին: Ել մարդ չմնաց չթրջված. հազարավոր ձեռներից վեր են սավառնում փուռալով անհամար աղավնիներ, սպիտակ թաշկինակների պես պտտավում են վերեռում և յերաժակներ կազմում: Նրանց հետ վեր են համբառնում ժողովրդի աղոթքները, վոր աստվածությունը բարով նորոգի այս տարին և լինի բարի «ամանոր»:

Թանձր ծուխ ե կանգնած ողի մեջ ալրվող զոհերից և մառախուղի պես փուլում ե գետնին: Փողը փշում ե այս ու այն տեղ և թմբուկը թնդում ե հարվածներից:

*) Այժմյան Ալաշկերտի:

Այս պատմվածքները ժամանակին «Հասկեր» ամսագրում տրապագրվել են մաս-մաս և ապա արտատպվել են առանձին գրքով: Նոր տպագրության համար նկարները իմ դեկավարությամբ և խմբագրությամբ պատրաստել ե նկարիչ Ռուտտերը:

ՍՏ. ԼԻՍԻՑՅԱՆ

Զիերի խըսինջը միախառնվում ե ձարդկանց յերգերի ու կանչերի հետ. ուրախություն և ցնծություն ե ամեն սալի մոտ, ամեն վրանի տակ:

Հորիզոնի վրա, սպիտակափառ Մասիսի գագաթին, հաղարավոր կայծերով պսպղում ե ձյունն աշնանամուտ արևի թեք ճառագայթներից: Դիմացը բաղմած ե լայնանիստ նպատ լեռ, վորի ստորոտից դուրս ե վազում կալտառ Արածանին (կամ Հայկական Յեփրատը, այժմ Մուրադ չայ): Ոծի պես սողալով՝ գետակը քսվում ե Բագավանի յեղերքին և վոլորգում, փախչում ե դեպի Տարոնի դաշտը, վոր հետո գրկախառնվի փրփրալից Մեծ Յեփրատի հետ ու գնա միանա Պարսից ծոցի ալիքներին:

Նախարարներն ել (իշխանները), թագավորն ել իրենց ընտանիքներով յեկել են տոնին: Մեհյանից վոչ հեռու, բաց դաշտի մեջ, ձգված ե արքունի բանակը, խոր խրամատով շրջապատված, և մեծտեղում լայն հրապարակի վրա, յերկար տարածությունով ուրիշ վրաններից անջատված, առանձնացած կանգնած ե արքայական գունավոր խորանը (վրանը): Իր բազմաթիվ բաժանմունքներով: Բանակի մուտքերի մոտ արթուն պահապանները վահաններն իշեցրած՝ կրթնել են յերկար նիղակներին և նախանձով նայում են իրանց ազատ ընկերներին, վորոնց ողնձե սաղավարտները պսպղում են այս ու այստեղ ժողովրդի բազմության միջից Նախարարների տղաները միասին հավաքված՝ խաղեր են սարքում աստծու պատվին և ցույց են տալիս իրենց ձեռքի և աչքի հմտությունը. նրանք նետեր են արձակում, նիղակ են ձգում, ձիարշավի մեջ են մըրցում: Ազնվատոհմ կանայք պար են բոնել և շլաշնում են իրենց դեմքի գեղեցկությունով, անթիվ գոհարներով և ճակատի վոսկիներով. նրանք ել յերգում են Վանատուրի փառքը:

Շքեղ ե թագավորի բանակը, աչք են կուրացնում նրա

դրոշակների թևատարած արծիվները. մեծ ե նրա զորությունը և հարստությունը, բայց այդ ըոպեյին «ամենարեր» ամանոր Վանատուրն» ե ամենքի սրտերին իշխում, նրա վառքն ե ամենքին հրապուրում: Հարյուրավոր տեղից ամբոխի մեջ լսվում ե զոգեվորված «գուսանի» (յերգչի, աշուղի) քաղցր ձայնը, վորը պատմում ե աստծու արարքները շրջան կաղմած հայրենակիցներին: «Բամբիոը» (նվագարան) ձեռին նա զարկում ե մետաղե լարերին և խորհրդավոր ձայնով յերգում ե առասպելը*) աշխարհի սկզբնավորության և առաջին մարդու մասին, ջրհեղեղի և Քսիսութբի (Նոյի) մասին:

Նա պատմում ե, թե ահեղ և յերեվելի եյին առաջին աստվածները, նրանք եյին աշխարհի մեծամեծ բարիքների պատճառը, նրանք ստեղծեցին աշխարհն ու մարդուն: Բազմացան մարդիկ ու աշխարհը լցրին չարությունով և նենգությունով, ուժեղը զրկում եր թույլին ու նրանից մարդությունով ճոխ ու զեղս ապրում: Մեծամացան մարդիկ, մոռացան և աստվածներին, և խղճմանքը:

Նա պատմում ե, թե բարկացան աստվածները, վորոշեցին Ծննդել ամեն շունչ արարած, վոր ել վոչինչ չմնա առաջի աշխարհից, ու ջրով հեղեղեցին յերկիրը ծայրից ծայր:

Սարսափելի որե՞ու:

Գուսանի հետ սոսկում ե, զարհուրում ե լող ամբոխը: Բայց ջրհեղեղից հետո նորից ծլեցին խոտերն ու ծառերը, նորից ծաղկեցին ծաղիկները, նորից սկսեցին հառերը, սունանալ սերմերն ու պտուղները, ընկնել մայր գետնի գիրկը ու նրա ծոցի մեջ ննջել:

Այդ Ամենարեր աստվածն ե, վոր առատությամբ սփռել և սերմերը ամեն տեղ:

*) Առասպել—աստվածների և դյուցազունների մասին պըրույց կամ պատմություն:

Այդ Ամանոր աստվածն ե, վոր նրանց ննջեցրել և
նորից արթնացնելու համար:

Այդ Վանատուր աստվածն ե, վոր լի ձեռքով ամեն
շրջողի, ամեն թափառականի համար ոթևանները լցրել
ե բարիքով և այնտեղ պատրաստել ե նրանց համար ապաս-
տան, «վանք»:

«Փառք Ամենաբեր աստծուն:

Փառք Ամենոր աստծուն,

Փառք Վանատուրին»:

Յերգում եր գուսանը: Յերգում եր յերգիչը, և ուն-
կընդիրներն ուշադրությամբ ականջ ելին դնում նրա խոս-
քերին, խրախուսում ելին նրան բարձրաձայն կանչերով
ու հետը պարում:

Բայց միայն Նավասարդի տոնին չեր, վոր յերգում
եր գուսանը: Ամեն մենենական տոնախմբության, ամեն
խնջույքի, թագավորի պալատում թե իշխանների ամրոց-
ներում, վորսից հետո՝ անտառում թե զաշտում, ամեն
գյուղական հարսանիքի, հնձից հետո, ձմեռվա յերկար
անգործ յերեկոները—ամեն առիթով հնչում եր նրա քաղ-
ցըրալուր բամբիոր: Խրճիթ և պալատ առատ պարդիա-
տրում ելին նրան ու հավատում, թե այդ յերգելու, նվա-
զելու շնորհը տվել ե նրան վահագն աստվածը:

Նա յերգում եր հրաշալի առասպելներ աստվածների
և նրանցից ծնվածների մասին, գեղեցիկ վեպեր հայրենի
հերոսների մասին: Նա հպարտությամբ փառաբանում եր
Հայկի ազատամիրությունն ու Արամի քաջությունը, գո-
վում եր Արայի պարկեշտությունը և Արտաշեսի շինարա-
րությունը, անեծք եր թափում վիշապների ծնունդ, նա-
խանձու, նենդամիտ Արտավազզի գլխին, ու վիպասանի
խոսքերը խորը գրոշմվում ելին լսողների մտքերում ու
վորդցվորդի անցնում ելին, յերեմն ավելի գեղեցկանալով,
յերբեմն ել խառնաշփոթվելով: Այդ ավանդություններից

եր միայն իմանում Հայաստանի զավակն իր աստվածների,
նահապետների և թագավորների մասին, քանի վոր գեռ
գրել-կարգալ չգիտեր, զրավոր պատմություն չուներ:

Բայց հետո յել, յերբ քրիստոնեության հաստատվելուց
հետո գիր հնարին ու շատերը գիր սովորեցին և սկսե-
ցին մատյանների (գրքերի) մեջ նշանակել հայրենի յերկ-
րի սև ու կարմր որերը, այդ ժամանակ ել գուսանի
յերգը չլուց: Հիմա յել մեր աշխարհի այս ու այն ան-
կյունում աշուղը պատմում ե անցած-գնացած մեծագոր-
ծությունները: Շատ բան սակայն արդեն անդարձ մոռաց-
վել ե, շատ բան արդեն դարերի հետ փոխվել, աղա-
վաղվել ե:

Կպատմեմ ձեզ այդ հայրենի առասպելներից և վե-
պերից մի քանիսն այնպես, ինչպես այդ հասել և մեզ
գուսաններից, աշուղներից՝ ըստ նրանց պատմածների:

ՁՐ ՀԵՂ Ե Ղ*)

Յեփրատի ափին, Միջագետքում կանգնած եր Սուրբակ քաղաքը։ Հին և պիղծ քաղաք։ աստվածները կամեցան զոչնացնել նրա անբարիշտ, արդարություն չըճանաչող բնակիչներին, վոր չբազմանան նրանք, վոր վոչ մի կենդանի արարած չմնա յերկրիս յերեսին։ Մեծ աստվածները բոլորը միասին հավաքված խորհուրդ արին։ Ալդտեղ եր և Անուն՝ յերկնքի աստվածը, և Բելը՝ յերկրի աստվածը, և Եան՝ ծովի աստվածը։ Ամենից ավելի մարդկանց վրա բարկացած եր Բելը, ամենից ավելի նա յեր պահանջում բնաջինջ անել մարդկանց ցեղը։ Յեվ լսեցին նրա պահանջներն աստվածները։ Բայց անհասանելի խմառության տերը, Եան, Դրի և ծովի աստվածը, մտքումը դրեց նրանց խորհուրդը հայտնել մարդկանց։ Նա լեկավ և հայտարարեց թե աղքատներին և թե հարուստներին։

«Ով խրճիթ, խրճիթ յեղեգնե, ով պալատ, պալատ աղյուսե։ Լսիր ինձ, խրճիթ։ Լսիր ինձ, պալատ։ Լսիր, ով վորդի Ռւբարատուտուի, դու, բարեպաշտ Քսիսութը։ Նավը թող լինի քեզ համար տուն, — նավ շինիր։ Թող քո ունեցած չունեցածդ — կյանքդ փրկիր։ Վերցրնւ քեզ նետ նավի մեջ կյանքի ամեն տեսակ տեսակ սերմեր։ Քո նավը թող լինի յերկար, բայց զայնությունն ու խորությունը թող միաչափ լինեն։ Յեվ իջեցրնւ նավդ ծովի վրա»։

Յոթն որ յոթը գիշեր բարեպաշտ Քսիսութը շինում

*) Բարելացոց ավանդություն, վորը պատմում եյին նաև հեթանոս հայերը։ Քրիստոնյա հայերը Քսիսութը տեղ առացին նոյ։

Եր իր նավը։ Նա ուշի ուշով կալնեց բոլոր ծակոտիկները։ վեց չափ կուպը գործածեց նա բոլոր ճեղքերը ծեփելու համար։

Նա բազմաթիվ յեզներ մատաղ արեց, ահագին սափորներով անուշահոտ լուղ, մեղր, գինի ծախսեց զոհաբերության ժամանակ, յերբ նավը շինված ավարտված եր։ Հետո նամին իջեցրեց ջուրը։ Յեվ ինչը նա կարողություն ուներ, բարձեց նավը։ Ամբողջ իր ընտանիքը, բոլոր տանեցիներին, ընտանի կենդանիներին ու վայրի գաղաններին նա ներս տարագ նավը։

Յերբ նշանակված ժամը լրացավ, Քսիսութը վերջին անգամ նայեց յերկրին և սոսկաց։ Նա մտավ նավը և գուռն ամուր փակեց։ Նավապետին նա հանձնեց այդ ահագին տունը։

Յեվ ահա ծագեց արշալույսը, սեսե թուխպեր բարձրացան յերկնակամարի վրա, վորոտը թնդաց, կործանիչ գողիները սավառնեցին սարերի, ձորերի վրայով։ Ժանկողիները սավառնեցին սարերի, ձորերի վրայով։ Ժանտախի աստվածն ազատություն տվեց հողմերին։ Հողմերը մինչև յերկինքն եյին բարձրացնում փոշին, և խավարն ու լոււսը իրար եյին խառնվում։ Հետո սոսկալի հեղեղներ թափվեցին վերեկց։ Մարդիկ խելագարի պես դես ու դես եյին ընկնում։ Յեղբարը չեր տեսնում յեղբարը, վոչ վոր ուրիշի մասին չեր մտածում։ Նույնիսկ աստվածները յերկնաքում սարսափահար յեղան։ Նրանք թաք կացան Անու աստծու մոտ, յոթը յերկինքներից ամենավերին յերկնաքում, և կծկվեցին պահպեցին յերկնային վանդակի մոտ։

Աստվածները նստուել ելին վշտահար, գլխակոր, անշարժ, շրթունքներն ամուր սեղմած։

Վեց որ և վեց գիշեր յերկրիս յերեսին վխտում եյին հողմերը, ջրերն ու մըրիկը, բայց լոթներորդ որվա լուսաբացին փոթորիկը գաղարեց, ջրերը խաղաղվեցին և ծովը հանդարտվեց, Քսիսութը բաց արեց պատուհանը և

յերեկվա լույսն ընկավ նրա յերեսին: Նա նայեց իր շուրջը — միայն անծայր ծով եր և մարդկանց դիակները լողում եին ջրի յերեսին: Նա վշտից չկարողացավ վոտքի վրա կանգնած մնալ և քիչ եր մնում ուշաթափ լիներ. յերեսը ձեռքերով ծածկեց և սկսեց բարձրաձախն հեկեկալ:

Մեկ որ ել անցավ—յերեաց մի կղզի: Նավը լողում եր դեպի կորդուաց լեռները: Մի սղոցաձուկ նավի առաջը կտրեց և կանգնեցրեց նրան մի լեռան վրա: Լեռը նրան թույլ չեր տալիս այլս ճոճվել: Այսպես անցավ առաջին որո, ապա յերկրորդը, յերրորդը, հետո չորրորդը, հինգերրորդը և վեցերրորդը:

Յոթներորդ որվա լուսաբացին Քսիսութրը վերցրեց մի աղամինի և բաց թողեց: Աղամինին թռավ հեռու, պատվեց մի քանի անգամ, բայց հանգստանալու տեղ չգտնելով՝ վերադարձավ:

Այն ժամանակ նա վերցրեց մի ծիծեռնակ և բաց թողեց: Ծիծեռնակը թռավ հեռու, պատվեց մի քանի անգամ, բայց հանգստանալու տեղ չգտնելով՝ վերադարձավ:

Այն ժամանակ նա վերցրեց մի ագռավ և բաց թողեց: Ագռավը թռավ հեռու և տեսնելով, վոր ջուրը պակասել ե, սկսեց ուտել դիակների միսը, կռալով հեռանալ և այլս չվերադարձավ:

Այն ժամանակ Քսիսութրը արձակեց բոլոր կենդանիներին աշխարհի չորս կողմը և ինքը սկսեց զոհ մատուցանել: Լեռան գագաթին նա սեղան կանգնեցրեց, նրա վրա դարսեց սրբազն անոթները, ամեն մի շարքում յոթը-յոթը հատ, լցրեց նրանց մեջ կինամոն և զանազան անուշահոտություններ: Իմացան աստվածները, անուշ հոտն առան: Ճանձերի պես նրանք վժվժում եյին զոհարանի շուրջը: Յեվ յերբ յեկավ իշտար (Աստղիկ) աստվածուհին, նա հանեց իր վզից Անու աստծու շինած մանյակը և ծիածանի պես կապեց յերկնքի կամարին:

— Ով աստվածներ,—ասավ նա, — յերդվում եմ իմ մանյակով, յերբեք չպիտի մոռանամ այս որերը, միշտ կէիշեմ այս որերը: Թող բոլոր աստվածները հավաքվեն գոհի շուրջը միայն թող Բելը չգա, վորովհետեւ նա յեր անմտությամբ հեղեղ ուղարկողը և իմ մարդկանց կորստի մատնողը:

Յերբ այնուհետեւ մոտեցավ Բելը, յերբ նա տեսավ նավը, վորի մեջ փրկվել եր Քսիսութրը, նա սաստիկ կատաղեց, նրա սիրու զայրույթով լցվեց աստվածների դեմ: Նա կատաղեց՝ թե ով ե փրկել Քսիսութրին:

Այն ժամանակ եան բերանը բացեց և գիմեց պատերազմասեր Բելին.

— Դու աստվածների հզոր զորավար ես: Բայց ինչպես կարող եր մտքովդ անցնել մի այսպիսի խելառ միտք, ինչպես կարողացար հեղեղ ուղարկել: Թող մեղավորը պատիժ կրեր իր մեղքերի համար, թող չարագործը տուժեր իր չարությունների համար: Բայց վողորմած լինելիք. թող բոլորը չկորչելին, խնախելիք. թող բոլորը չփոչնչանային: Հեղեղի փոխարեն թող գալին առյուծներն և քչացնեյին մարդկանց թիվը, հեղեղի փոխարեն թող սովոր գար և անմարդացներ յերկիրը, թող ժանտախառ գար և ավերեր յերկիրը, բայց թող ջըհեղեղը չլիներ:

Այն ժամանակ Բելին ուշքի յեկավ: Նա բռնեց Քսիսութրի ձեռքից, մտավ նավը, հետը ներս տարավ նույնպես և նրա կնոջը, և այնտեղ յերկուսին ել իր առաջ չուքցըրեց: Կանգնեց նրանց մեջտեղը և որհնեց այսպես:

— Մինչեւ ալսոր Քսիսութրը մահկանացու յեր, ալսուհետեւ նա և իր կինը կլինեն աստվածներիս նման: Թող Քսիսութրը հավիտենական ապրի հեռու աշխարհում, գետերի ակունքների մոտ:

Յերկար սպասեցին Քսիսութրին և նրա կնոջը զոհարանի մոտ այն մարդիկը, վորոնը ազատվել ելին նավի մեջ

Ջրհեղեղից, և չփիտեյին, թե ի՞նչու յե Քսիսութը ուշանում։ Յեվ բարձրածայն կանչում եյին նրանց։ Յեվ ահա մի ձայն լսվեց յերկնքից, վոր նրանց ասում եր.

— Իզուր միք վորոնի Քսիսութին և նրա կնոջը. իզուր միք կանչի նրանց անունները։ Բարեպաշտության համար ասովածները նրանց վերացրին, և նրանք ապրում են հիմա մեզ մոտ։

Յերբ մարդիկ հարցրին, թե վորտեղ են, վոր յերկրում են գտնվում իրենք, վերևից նրանց պատասխանեցին.

— Դուք Հայաստանումն եք։ Գնացեք այստեղից գեղի հարավ։

Նրանք ել հնագանդվեցին հրամանին, զոհեր մատուցին ասովածներին և գաղթեցին հարավ, Բարելոն։

Այսպես վերջացավ Ջրհեղեղը և մարդիկ նորից բազմացան։

Կորդվաց լեռներում հետո, դարեր անց, ցույց եյին տալիս Սրարատի այն լեռը, վորի գագաթին կանգնել եր նավը։ Ասում եյին, թե այնտեղ անվաս մնում եր նավի մի մասը։ Բարեպաշտ մարդիկ բարձրանում, վերցնում եյին նրա փայտից կամ պոկում եյին կուպրից մի կտոր, հավատում եյին, թե արդ փայտը կամ կուպրը փրկարար գեղ ե և մարդուն բժշկում ե բազմաթիվ հիվանդություններից և ցավերից։

Իսկ վորտեղ ե ապրում Քսիսութը։

Մինչ երջերս ել հայ, ժողովրդի մեջ ծերերը յերկլուղածությամբ և ակնածությամբ իրենց հայացքն եյին ուղղում Մասիսի ձյունապատ գագաթին և ասում։

— Ճեսէք, այն փայլիուն ձյուների մեջ ե ապրում ծերունի նոյր անմահական կյանքով։ Յերբ Մասիսի գագաթին աւալեր են կուտակվում, այդ նոյն ե, վոր իր կառքով զբունում ե ախտեղ, արդ՝ նրա ձիերի սմբակների տակից սպիտակ փոշին ե բարձրանում։ Իսկ յերբ լեռան

գլուխը պսպղում ե հազար ու մի կայծերով, այդ նոյի պալատն ե, վոր արևի ճառագայթներից շողշողում ե իր անթիվ ու անհամար ակներով։

Քսիսութը վորդիք՝ Զրվան, Տիտան և Հապետոսթե (Սեմ, Քամ և Հաբեթ) բաժանեցին աշխարհը իրար մեջ, բայց Զրվանն ուղեց ամենքի վրա բռնանալ, վերջն ել թագավորեցնել իր վորդիներին։ Իսկ յեղբայրներն ընդդիմացան, և սկսվեց նրանց մեջ մի սոսկալի կռիվ։ Մեջ մտավ քույրը, դադարեցրեց աղմուկը և կրտսեր յեղբայրներին համոզեց, վոր Ավագը՝ Զրվանը թագավորի, միայն այն պայմանով, վոր նրա մահից հետո զավակներին չանցնի այդ թագավորությունը։ Այն ժամանակ Տիտանյաններից հզոր հսկաներ պահապան դրին Զրվանի տանը, վոր արու զավակ ծնվի թե չե՝ սպանեն։ Այսպես յերկու մանուկ սպանեցին։ Քույրը վերջապես համոզեց Տիտանյաններից մի քանիսին, և նրանք համաձայնվեցին կենդանի թողնել այնուհետև ծնվածներին, միայն թե տանեն հեռու արևմուտք՝ դեն ձգեն։ Այն լեռը, վորտեղ ձգում եյին Զըրվանի վորդիներին, կոչվեց Դյուցընկեց^{*)}։

*) Դի կամ դիք—աստված։ «Դյուցընկեց»—աստվածներին գեն ձգելու տեղ։ «Դյուցազուն»—աստվածներից ծնված։

Միայն Թորգոմի վորդին՝ ազատասեր Հայկն եր, վոր
չուղեց նրան ծառայել և աստծու տեղ պաշտել Նա չվեց,
գնաց Բաբելոնի կողմերից՝ տաք յերկրից դեպի հյուսիս,
դեպի Արարատի ցուրտ յերկրը, եր հետ առնելով իր


II

ՀԱՅԿ ՅԵՎ ԲԵԼ

Քսիսութրից ծագեց հաղթանդամ, վիթխարի ու ան-
հեթեթ հսկաների ցեղը, վորոնց մեջ ծնվեց աշտարակաշի-
նության անբարտափան միտքը: Յեվ նրանք սկսեցին կա-
ռուցել մի բարձր աշտարակ, այսքան բարձր, վոր յեթէ
մյուս անգամ կրկնվի ջրհեղեղը, բարձրանան այդ աշտա-
րակի գլուխը և փրկվեն: Յերբ նրանք զբաղված եյին աշ-
տարակաշինությամբ, մի ահազին հողմ բարձրացավ աստ-
վածների ցասումից, քանդեց, ցրիվ տվեց աշտարակը, և
անլուր բարբառներ բաշխեց նրանցից ամեն մեկին: Աղ-
մուկ և շփոթությունն ընկալ մեջները: Այդ հսկաներից
մեկն եր և Հապետոսթյան*) Հայկը, Թորգոմի վորդին, ան-
վանի ու քաջ նահապետը, ամրակազմ ու հաստաբազուկ
դյուցազունը, գանգուր մազերով և զվարթ աչքերով աղեղ-
նավորը: Նա ընդդիմացավ ամենքին, վորոնք կամենում եյին
ստրկացնել ուրիշ ազգերը և բռնի ուժով միավետ դառ-
նալ դյուցազունների մեջ: Նա աներկյուղ ձեռք բարձրա-
ցրեց նաև Տիտանյան Բել հսկայի դեմ, վորն արդեն շա-
տերին եր զորութիւնմբ և խորամանկութիւնմբ իրեն հնա-
գանդեցրել:

Բայց զուռող Բելի բախտն աջողեց և նա տիրեց ա-
մենքին: Բոլոր ազգերը կատարում եյին նրա հրամանները,
յերկրպագում եյին նրան և զոհ մատուցում:

*) Հապետոսթեյի ցեղից:



անզրանիկ վորդի Արմենակին և մյուս վորդիներին, աղ-
ջիկներին ու թոռներին: Արանք բոլորն ել զորագոր մար-
դիկ եյին, թվով մինչև յերեք հարյուր հոգի: Նրա հետ,



բացի ծառաներից, հեռացան և շատ ոտարականներ: Յեկայսպես բոլորը միասին, իրենց ունեցած չունեցածով, հասան վերջապես մի դաշտավայր տեղ, Կորդվաց լեռների ստորոտում (Արևելյան Տիգրիսի ավին): Այստեղ արդեն ապրում եյին ավելի առաջ ցրված մարդկանցից շատերը: Հայկը սրանց հնազանդեցրեց իրեն, շինեց այստեղ բնակության տուն և փորդեցվորդի ժառանգություն տվեց այս կալվածքն իր Կաղմոս թոռանը, Արմենակի փորդուն, իսկ ինըը տնով տեղով քաշվեց ավելի հեռու, գնալով միշտ հյուսիս-արևմուտք: Վերջապես նա կանգնեց մի լեռնադաշտում, վորձգում և Արածանի գետի և Աղի (Վանա) ծովի մեջտեղ, և այստեղ հաստատեց բնակության տեղ իր ցեղի համար: Գավառը նա կոչեց Հարք (հալրեր), այսինքն թե՝ այստեղ բնակվողները թորգովյան (հայկական) ազգի նախահալրերն են: Հարքում նա շինեց մի գյուղ և իր անունով անվանեց Հայկաւեն:

Լեռնադաշտակի մոտ, մի լայնամիտ լեռան ստորոտում, նույնպես բնակվում եյին առաջուց բաժանված մարդիկ՝ Զրպանի (Սեմի) ցեղից: Արանք իրենց կամքով ճանաչեցին Հայկին իրենց տեր և այսպիսով մեծացրին նրացեղը:

Բայց չեր կշանում բռնակալ Բելի փառասիրությունը՝ նա ուղարկում է Հայկի մոտ իր փորդիներից մեկին հավատարիմ մարդկանց հետ և պատվիրում ե ասել նրան ալսպես.

— Բնակվեցիր այդ սառնամանիքի ու ցրտի մեջ և սառուց ես գարձրել միաքղ ու հոգիդ: Զերմացրու, մեղմացրու հպարտ բարքիդ ցրտությունը, հնազանդվիր ինձ և հանդարտ ապրիր փորտեղ կամենաս իմ տաք յերկրում:

Բայց Հայկը խիստ ու խրոխտ պատասխանով յետ դարձրեց Բելի պատգամավորներին:

Կատաղեց Բելը և մտածեց՝ ինչ ել վոր լինի բռնի

Հայկին և սպանի: Իր անթիվ-անհամար ազգերից նա ժողովեց հետևակ զորքերի մի ահագին բազմություն և շտապեց դեպի Արարատ լերկիրը, Կորդվաց լեռները, վորոնց ստորոտում բնակվում եր Կաղմոսը: Տեսնելով նրա զորքերի շատությունը, Կաղմոսը փախազ՝ առջելից սուրհանդակ ուղարկելով Հայկին նախազգուշացնելու.

— Իմացիր, ով մեծդ դյուցազունների մեջ, վոր Բելը գալիս ե քեզ վրա անհամար քաջերով և յերկարահասակ հսկաներով: Նա արդեն հասել է իմ տան հողերին, և յես ինքս կնոջս և զավակներիս հետ փախատական՝ ահա գալիս եմ քեզ մոտ: Շտապիր, մտածիր, ինչ վոր անելու յես, արաւ:


«Ուշիմ, խոհեմ, քաջագանգուր ե խայտակն» Հայկն իսկույն ժողովեց իր բոլոր փորդիներին ու թոռներին, քաջ և աղեղնավոր հսկաներին, նույնական և ծառաներին ու առհասարակ իր ձեռքի տակ յեղածներին, և անվեհեր ընդառաջ գնաց, թեեւ թվով իրենք քչվոր ելին:

Յերբ նրանք հասան Աղի ծովի ափին, Հայկը կանգնեցրեց իր սակավաթիվ զորքը և սասավ.

— Ո՞վ ազատամեր թորգոյամներ, ձեզնից ով կուզեստրուկ թավալվել գոռոզամիտ Բելի վոտների տակ: Հարձակվենք հենց այստեղ, ուր կանգնած կլինի ինքը բըռնակալն իր քաջերի բազմության մեջ: Թող կամ փառքով ամենքս մեռնենք ու չտեսնենք մեր աչքով, թե ինչպես Բելը ծառա կտանի մեր գերդաստանը, կամ ցույց տանք նրան մեր բազկի աջողությունը՝ ցրվենք նրա խառնիմաղանձ ստրուկ ամբոխը և ապրենք իբրև հաղթողներ:

Այսպես խոսեց Հայկը և առաջ տարավ իր կտրիճներին մեկ ասպարեզ ևս, մինչև վոր հասավ մի դաշտաճն հովիտ, վոր ընկած եր բարձր լեռների մեջ: Դաշտի միջով վազում եր մի գետակ: Նոր եր Հայկը ամրացել աջ ափին, վոր նրա մարդիկ, յերեսները վեր բարձրացնելով, տեսանդիմացի լեռան լանջով իջնում ե թշնամին: Կարծես մի

— Շուն ես դու և շների յերամակից եք դու և քո
ժողովուրդը։ Այս ե գալիս եմ, վոր դատարկեմ քեզ վրա
իմ կապարձը։



Վարսի վերակացուն բաց ե բողնում շներին

Յել իրար խառնվեցին յերկու կողմերի հսկաները։ Ա-
հազին դղրդում բարձրացավ յերկրի վրա նրանց ընդհարու-
մից, և ահ ու սարսափ ելին ձգում նրանք միմյանց սրտերի
մեջ իրենց հարձակումներով։ Քիչ հսկաներ չկործան-
վեցին և գետին տատալվեցին այստեղ դիպչելով սրի բե-
րանին, և վոչ մեկի, վոչ մոռսի կողմը չեր հաղթում։
Տարակուսեց և զարհուրեց բելն այս անսպասելի դիպվա-
ծից և սկսեց յետ ու յետ բաշվել բարձրանալ այն բլուրը,

հեղեղ, հանդուգն հորձանքով ցիր ու ցան վայր եր սա-
հում Բելի անկարգ զորքը, իսկ ինքը՝ Բելը, հույսը դրած
իր զորավարների քաջության և ուժի վրա, անհամբերու-
թյունից առաջ եր ընկել։ Նա կանգնած եր արդեն գետակի
ձախ ափին մի բլրակի վրա և, մի քանի ընտիր հսկանե-
րով շրջապատված, իբրև մի դիտանոցից, դիտում եր գո-
ռող և հաղարտ։ Բավական տարածություն կար Բելի և
յետ մնացած իր ամբոխի մեջ։ Հայկն իսկուն ճանաչեց
նրա զինավառ խումբը և իրեն բռնակալին։ Բելը հազած
ուներ յերկաթե գլխանոց պապղուն ծայրերով, լանջին և
թիկունքինը պղնձե տախտակներ, վոտների բարձերին և
բազուկներին պահպանակներ, մեջքին կապած եր գոտի
և ձախ կողքից կախած եր յերկսալրի սուրը, աջ ձեռքին
բռնել եր ամուր նիզակ, իսկ ձախ ձեռքին՝ վահան, և
ընտիր-ընտիր տղամարդիկ կանգնած եյին նրա աջ ու ձախ
կողմում։ Այս վոր տեսավ Հայկը, շտապեց կարդի զնել իր
սակավաթիվ զորքը. Նա Սրմենակին յերկու յեղայրներով
կանգնեցրեց աջ, իսկ կադմոսին ուրիշ յերկու վորդիների
հետ ձախ կողմից, ինքն ել անցավ ամենքի զլուխ, իսկ
մնացածներին շարեց յետե. այսպես յեռանկյունի ձեռվ
կաղմեց իր գունդը և հանդարտ դիմեց առաջ։

Մի փոքր կանգ առավ Հայկը և հեռվից կանչեց Բելին։

— Ի՞նչ ես ընկել յետեիցս և ալստեղ յեկել։ Դարձիր,
պնա քո տեղը, յեթե վոչ՝ կմեռնես դու այսոր իմ ձեռ-
քից։ Միթե մոռացել ես, վոր իմ նետը յերբեք չի վրիպում։

Պատասխանեց Բելն ու ասավ։

— Յեթե չես ուզում ընկնել իմ մանուկ զինակրիս
ձեռքը և մեռնել նրա սրից, յեկ քո կամքով մտիր իմ
իշխանության տակ և խաղաղությամբ բնակվիր իմ տան
մեջ։ Յես քեզ իմ վորսորդ տղաների և վորսի շների վա-
րիչ կկարգեմ։

Զհամբերեց Հայկը և սկսեց հայոյել։

Հայկն իսկույն հասկացավ նրա միտքը. նա առաջ նետվեց, մոտ հասավ ազգերի հրամանատարին, լիովին քաշեց իր լայնալիճ ամուր աղեղը և դիպցրեց յերեքթելան նետը հենց Բելի կրծքին: Ծակեց նետը նրա կրծքի պղնձե տախտակը, շեշտակի գուրս յեկավ թիկունքի մեջտեղից և խորը ցցվեց գետնի մեջ: Յերկրին զարկվեց պարծենկոտ Տիտանյանը և շունչը փչեց, իսկ նրա գունդն ու ամբոխը տեսնելով քաջության այս ահազին գործը՝ սարսափահար փախան դես ու դեն: Հայկի մարդիկ ընկան նրանց լետեր և խլեցին նրանց ձեռքից անթիվ ձիեր, ջորիներ և ուղտեր:

Իր հաղթության հիշատակին Հայկը շինեց կռվի դաշտում մի դաստակերտ (գյուղ) և դա անվանեց Հայք. այդ պատճառով հետագայում դափառն ել կոչվեց Հայոց ձոր, իսկ այն բլուրը, ուր ընկավ Բելը, Հայկն անվանեց Գերեզմանի: Բելի մարմինը նա պատել տվեց գեղերով և հրամայեց տանել Հարք և թաղել մի բարձր լեռան վրա, վոր կանայք և վորդիք միշտ տեսնեն իրենց ամուսինների և հայրերի քաջությունը:

Մինչև այսոր ել Վանա ծովի հարավ-արևմտյան ափին, Նեմրութ լեռան մոտ, դաշտի մեջ, ցույց են տալիս կանգնած կամ պառկած սև քարերի մի յերկար շարք, վոր ձգում ե դեպի լեռը: Հեռվից այնպես ե թվում՝ իբր թե դա մի կարավան ե, իբր թե դրանք մարդիկ և ուղտեր են: Տեղացիք «Բելի ուղտեր և ուղտապահներ» են ասում այդ քարերին և պատմում են, վոր Հայկը սպանելով Բելին՝ նրա գիակը հանել ե ավել Նեմրութի գագաթը, այնտեղ նա փորել ե մի թոնիր և այդ թոնիրի մեջ կախել ե դիակն ու վառել: Աստծու հրամանով այն կրակը ջուր ե կարվել, դիակի մոխիրը տակն ե իջել, վոր քամին չտանի, չըցրվի, իսկ Բելի մարդիկն և ուղտերը քար են դառել: Մինչև այսոր ել թոնիրն ու ջուրը կան, այդ ջուրն ե, վոր տեղա-



ցոց ասելով՝ ապրի տակից շարունակ բղխում եւ և կազմում
և Մեղրագետը*):

Պատերազմի ավարից Հայկը մեծ բաժին հանեց իր
թռու կադմոսին, տանու ծառաներից ել անվանի մարդիկ
պարզեց նրան, վոր ժամանակին իրեն նախազգուշացըրել եր
Բելի մոտենալու մասին, և պատվիրեց գնալ նախկին բնա-
կության տեղը՝ կորդվաց աշխարհը, իսկ ինքը վերադար-
ձավ Հայկաշեն, ուր շատ տարիներ ապրելուց հետո մե-
ռավ. մահից առաջ նա իր ամբողջ ազգը Արմենակ ավագ
վորդուն հանձնեց:

Հայկի անունով ե մեր ժողովուրդը կոչվել հայ, իսկ
բովանդակ յերկերը՝ Հայք կամ Հայաստան:

*) Նեմըութը—հանգած հրաբուղիս ե, վորի խառնարանի մեջ
գոյացել ե լճակ: Մեղրագետը՝ Մշո դաշտի գետն ե:

III

Ա Ր Ա Ս

Հայկի մահից հետո նրա վորդիք սկսեցին ցրվել զա-
նազան կողմեր: Արմենակն իր յեղբայրներին*) տվեց Հարքը,
իսկ ինքն իր ընտանիքով Արածանի գետի հոսանքով քաշ-
վեց դեպի հուսիսարևելք: Նա անցավ բարձր լեռների մյուս
կողմը, և նրա առաջ բացվեց մի հրաշալի հովիտ, վորն
իր ընդարձակությամբ ձգվում-տարածվում եր դեպի արե-
վելք: Դաշտը շրջապատված եր լեռների շղթաներով. նրանց
ստորակից բղխում եյին հստակ, ականակիտ աղբյուրներ և
կազմում բազմաթիվ գետակներ: Գետակները հեզությամբ
սահում եյին լեռների տակով դաշտի ափերով և վերջը ի-
րար հետ գրկախառնվում եյին ու դառնում մի մեծ գետ, և
գետը հետզհետե ուռչում, լայնանում եր և մի ցոլացող վոս-
կե գոտու պես գոտենորում եր հովիտը արևմուտքից դեպի
արևելք:

Դաշտի հարավային կողմում, կարծես մի ծերունի
յերիտասարդ լեռների մեջ, նստած եր մի սպիտակափառ
ձյունապատ լեռ: Նա բուսել եր յերկրից ուղղակի դեպի
վեր՝ միայն մի տեղ մի փոքր կոտրվելով, և ամենից վեր
եր բարձրացըրել իր սրածայր գագաթը: Նրա դիմացը, հյու-
ստում, լայն փուլել եր մի ուրիշ ձյունապատ լեռ, վորի
գագաթն իր չորս ցից-ցից ծայրերով բարձի վրա դրված
թաղի յեր նմանում:

Արմենակն իջավ այդ խոր հովիտը, անցավ մեծ գետի

*) Այդ յեղբայրներից մեկի վորդին եր Բաղը, վորի անունով
Աղի ծովը կոչվեց Բզնունյաց (Վանա) ծով:


մյուս ու բնակվեց այնտեղ հյուսիսային լեռան ստորոտում: Իր անունով նա հյուսիսային լեռը կոչեց Արագած, իսկ իր կալվածքը՝ Արագածոն: Այդ հովտումն ել նա շատ տեղ գտավ առաջուց ցրված մարդկանց և իրեն հնագանդեցրեց:

Արժ Ենակի վորդին՝ Արմայիսը հոր մահից հետո շինեց մեծ գետի ափին մի բլրի վրա Արմավիր ավանը. վերջինս հետո ամուր քաղաք դառնավ: Այստեղ յերկար ժամանակ ապրեցին Հայկի հաջորդները, ազգի նահապետները: Իր Առաստ թոռան անունով Արմայիսը մեծ գետը կոչեց Յերավի:

Արմայիսն ուներ մի շատակեր ու բազմածին վորդի, անունը Շարա: Սրան նա իր մոտից հեռացրեց և տուն ու տեղով ուղարկեց Արագածի մյուս կողմը, այն բարեբեր և արգավանդ դաշտը, վորը մինչև հիմա յել հոչակված է իր առաստ հունձով: Շարայի անունով այդ դաշտը կոչվեց Նիրակ: Այնուհետև դեռ յերկար ժամանակ հայ գյուղացիք, յերբ հանդիպում եյին մի շատակերի, ասում եյին. «Թե քո վուտիրը Շարայի վուտիրն ե, մեր ամբարները Շիրակի ամբարները չեն», այսինքն՝ մեր մենք քեզ պահելու համար Շիրակի ամբարները չունենք:

Ամեն մի նահապետ այն ժամանակներում իր ամբողջ կալվածքը տալիս եր ավագ վորդուն, իսկ մյուս վորդոց համար դեռ կենդանության որով նոր ու նոր հողեր եր գտնում ու շենացնում: Այսպես ել Արմայիսի վորդի Ամասիան Արմավիրը թողեց իր ավագ վորդի Գեղամին, իսկ կրտսերներին վերցրեց տարավ Յերասխի մյուս կողմը, աջ ափը, գետի հարավային սպիտակագույն լեռը: Այստեղ նա շինեց նրանց համար գյուղեր, իսկ լեռն իր անունով կոչեց Մասիս:

Հոր մահից հետո Գեղամը դառնավ նահապետ: Նա Արմավիրը տվեց իր վորդի Հարմային, իսկ ինքը գնաց




Ազատ գետով գեղի արևելահյուսիս: Նա մի լեռ անցավ և հասավ մի քաղցրաջուր ծովակի, վորի մեջ շատ կարմրախայտ ձկներ կան, լեռան անունը նա դրավ Գեղ, իսկ ծովափինը՝ Գեղաբունիք, ծովն ել կոչվեց Գեղամա ծով (այժմ Սևանա ծով): Այստեղ ծնվեց նրա Սիսակ վորդին, վոր մի ամրակազմ, գեղեցիկ, ճարտարախոս և քաջաղեղնավոր դառավիք: Սրան ընծայեց Գեղամն իր ունեցածի մեծ մասը և բազմաթիվ ծառաներ ու ժառանգության բաժին կտրեց ծովակից մինչև այն դաշտը, վորտեղ Յերասխը՝ անցնելով նեղ տեղերով, քարքարոտ լեռների միջից, ահազին դղղոյնով իջնում խառնվում ե կուր գետի հետ*): Այս յերկիրը Սիսակը լցրեց շինություններով: Արևելան հարեանները՝ պարսիկները նրա անունով այս աշխարհը կոչեցին Սիսական, իսկ հայերն ասում եյին Սյունիք:

Այսպես իրար յետերց Հալկին հաջորդեցին հինգ նահապետներ: Սրանց որով հայոց ազգը ցրվեց և բնակվեց Արածանու և Յերասխի հովիտներում և իրեն հնազանդեցրեց առաջուց այստեղ յեկած մարդկանց:

Բայց հենց այն ժամանակ, յերբ հայերը բազմանում և ուժեղանում ելին Հայաստանում, հարեան յերկըներումն ել ուժեղանում ելին ուրիշ ազգեր: Նրանք աչք ձգեցին նաև Հայոց աշխարհի վրա: Արևելքից, հարավից, արևմուտքից գլուխ բարձրացրին ոտար իշխաններ և սկսեցին վոտնակոս անել հայոց հողերը:

Այդ ժամանակ արդեն նահապետ եր Հարմալի վորդի Արամը:



*) Մեղրու նեղ կիրճով Յերասխը իջնում և Մուղանի դաշտը, վորտեղ խառնվում ե կուրի հետ:

Արամը, այս աշխատասեր և հալրենասեր քաջը, գերադասում եր մեռնել իր պապերի թողած ժառանգության համար, քան թե կեսդանի աչքով տեսնել, թե ինչպես ոտարազգիների վորդիք կոխոտում, ավերում են հալրենի սահմանները և ստրկացնում, իրենց են ծառալեցնում իր ազգականներին, իր արյունակից հարազատներին։ Արամն այնպիսի քաջագործություններ կատարեց, այնքան պատերազմների մեջ հաղթեց, այնպես ընդարձակեց հայոց աշխարհն ամեն կողմից, վոր նրա անունը հայտնի յեղավբոլոր ազգերի մեջ և ոտարները նրա անունով հայերին կոչեցին արևեն, իսկ Հայաստանը՝ Արմենիա։

Մոտ յերկու տարի յեր, վոր արևելքից, Յերասխի մյուս կողմից, մտել եյին յերկրի ներսը մեղացի յերիտասարդները։ Նրանց առաջնորդն եր մի վոմն նյուքար Մագես, մի գոռող և պատերազմասեր մարդ։ Այդ վայրենիներն իրենց ձիերով սմբակակոխ եյին անում հայոց հողերը և ստրկացնում եյին հայերին։ Արամը ժողովեց իր ազգականներից քառասուն հազար կարիչ տղամարդ, մեկը մյուսից քաջ աղեղնավոր, ուժեղ, աջողածեռն և վալելչակազմ յերիտասարդներ։ Նա հանկարծակի հարձակվեց նյուքար Մագեսի ու մեղացիների վրա և առաջ քան արեգակը ծագեց, կոտորեց ալդ վայրենի բազմությունը, հենց իրան նյուքար Մագեսին ել բռնեց ու ուղարկեց Արմավիր։ Արամը հրամայեց նյուքարին ճակատից մեխել պարսպի աշտարակի ծայրին, վոր ամեն անցորդ, յեկող-զնացող տեսնի, ինչպես և վրեժինդիք լինում Արամն իր հայրենի հողը կոխոտողներից։ Այսուհետեւ նա ինքը հարկի տակ դրավ մեղացոց ամբողջ յերկիրը։

Այս հաղթությունը տանելուց հետո, Արամը նույն զորքով շարժվեց դեպի հարավ, վորովինետև այնտեղ ել կար հայոց յերկրի մի ասպատակիչ։ Դա հսկաների ցեղից Բարշամ անունով մեկն եր։ Քառասուն հազար հետևակ և

հինգ հազար հեծյալ մարդկանցով Բարշամը մտել եր կորդվաց աշխարհից այս կողմ, սաստիկ նեղում եր անողորմ հարկերով հայերին և անապատ եր դարձրել ամբողջ շրջակայէք։ Արամը նրա հետ ճակատեց, կովի մեջ հաղթեց նրան ու հալածեց կորդվաց յերկրի միջով մինչև Ասորեստանի դաշտը։ Թշնամիներից շատերը հայերի սրից ընկան, իսկ Բարշամը սպանվեց՝ հանդիպելով Արամի զինակիրներին։ Բայց ասորեստանցիք չհավատացին, վոր Բարշամի պես քաջ ու ուժեղ մարդը կարող եր մեռներ և յերկար գարեր աստծու տեղ եյին պաշտում նրան։ Այստեղ ել Արամը ասորեստանցոց յերկրի մի մասն իրեն հնազանդեցրեց և յերկար ժամանակ այս կողմերից հարկ առավ։

Այսպես նա վոչնչացրեց յերկու թշնամիներին։ Բայց ամենից վտանգավորն եր Պայապիս Քաղյա, վորը բռնել եր ամբողջ արևմուտքը, Կապադովկիան, Պոնտոսից (Սև ծովից) մինչև Միջերկրական ծովը։ Այս Տիտանյանն այնքան ուժեղ եր, վոր Արամը հույս չուներ նրան շուտով հաղթելու։ Ուստի նա արևելյան սահմանների պաշլանությունը հանձնեց Սիսականներին, իսկ հարավային սահմաններինը՝ Կադմիաններին, վոր այդ կողմերից ապահով լինի, ավելացրեց իր նախկին զորության վրա քառասուն հազար հետևակ և յերկու հազար հեծյալ ևս ու միայն այսպիսի պատրաստություն տեմնելով՝ գնաց դեպի արևմուտք, դեպի Փոքր Ասիա։ Նա անցավ Յեփրատը, անցավ և Տավրոսի շղթան և վերջապես պատահեց Պայապիսին։ Կովի մեջ հսկաները պատահեցին հսկաներին, բայց Պայապիսն այսպիսի ջարդ կրեց, վոր գլուխը կորցրած՝ փախավ մինչև ծովափ ու շտապեց անցնել մի կղզի։ այնուհետեւ այլ ևս նրա անունը վոչ մի տեղ չափեց։

Պայապիսի աշխարհը Արամը միացրեց իր յերկրի հետ և այնտեղ կառավարիչ նշանակեց Մշակին, իր ազգականներից մեկին, տալով նրան տասը հազար զորք։ Արմավիր

վերադառնալուց առաջ նա հրամակեց, վոր այդ կողմերի քոլոր բնակիչները սովորեն հայերեն լեզուն և խոսեն հայերեն: Այդ եպատճառը, վոր վերջը այդ աշխարհը անվանվում եր Առաջին Հայք: Սակայն այստեղի մարդիկ Երբեք չսովորեցին հայերեն լավ խոսել: Մշակը Այսու*) գետից վոչ հեռու մի փոքրիկ պարսպապատ քաղաք Չենեց և իր անունով կոչեց Մշակ, բայց տեղացիք չկարողանալով անունն ուղիղ հնչել՝ ասում եյին Մածաֆ**):

Արամը այդ կողմերից սկսած սինչե բուն Հայաստանը ամբողջ դատարկ տարածությունը լցրեց բնակիչներով, այնպես վոր հետո այդ հոդերը կոչվեցին Յերկրորդ, Յերրորդ, Նույնիսկ Զորրորդ Հայք:

Այլ ևս ուրիշ շատ մեծամեծ գործեր կատարեց Արամը, վորոնց համար ամեն ազգ նրան գովարանում եր:

Մեկը կար սակայն, վոր չեր հանդուրժում նրա անունը. դա Նինոս թագավորն եր: Նա Տիգրիսի ձախ ափին շինել եր Նինվե քաղաքը և այնտեղից աշխատում եր իր իշխանության լուծը դնել դրացի ազգերի վրա: Նինոսը լսել եր իր պապ Բելի հաղթվելը Հայկից և մտադիր եր վրեժխնդիր լինել նրա մահվան համար: Նա տարիներով մի հարմար դեպքի յեր սպասում, վոր արմատից ջնջի Հայկի ամբողջ ցեղը: Բայց Արամը շատ հզոր եր և քաջ: Նինոսի հոգու մեջ ծանր կասկած ընկավ՝ չլինի՞ թե այդ պատերազմից վես հասնի հենց իր թագավորությանը: Ահա թե ինչու նա ծածկեց իր չար մտադրությունը, մարդ ուղարկեց Արամի մոտ և իր զոռող կարճամտությամբ հրամայեց, վոր Արամն անկասկած և աներկյուղ վարի իր իշխանությունը: Նա իրավունք տվեց Արամին մարզարտե վարսակալ (մազերի շուրջը կապվող գլխարդարդ) կրելու և իրենից հետո աշխարհիս յերեսին յերկրորդը կոչվելու:

*) Այսուը Ղըզը Իրմակ և կոչվում այժմ:

**) Այս քաղաքը շատ հետո ընդարձակվեց և կոչվեց Կեսարիա (այժմ Կայսարիե):

Այս Նինոսն այնքան հպարտ եր ու մեծամիտ, վոր ատիպում եր, վոր իր հպատակներն ամեն քաջագործության սկիզբը միայն իրեն համարեն և փառաբանեն միայն իր գործերը, նա այրել եր տալիս ամեն գիրք, վորտեղ գովասանքը եր զրված լինում մեկ ուրիշի մասին: Բայց նրա բոլոր ջանքերին հակառակ՝ աշխատասեր և հայրենաւաներ Արամի անունն ավելի հեռու յեր տարածվում, անցնում եր վորդեց վորդի և դեռ չի մոռացվել մեր որեցում ել:

IV

ՇԱՄԻՐԱՄ ՅԵՎ ԱՐԱ ԳԵՂԵՑԻԿ

Արամ նահապետի զորության համբավն այնքան մեծ էր, վոր նույնիսկ նրա մահից հետո Ասորեստանի աշխարհակալ թագավոր Նինոսը չհամարձակվեց Հայաստանի վրա արշավել ու Արամի զորդի Արային ել տվեց նույն պատրիժները, ինչ վոր տվել եր Արամին: Այսպես Արան ել հոր պես մարգարտե վարսակալ եր կրում զլաբին և կոչում եր աշխարհիս յերեսին յերկրորդը Նինոսից հետո:

Բայց իր գեղեցկությամբ նա աշխարհիս յերեսին առաջինն եր:

Մարդ կար, վոր տեսնելով Արային՝ չհիանար նրա տեսքից՝ Ճանապարհորդներն ու յերգիչներն յերկրից յերկիր քաջելով՝ միշտ նրա աննման գեղեցկության գովքն ելին անում: Արայի համբավը հասավ և Նինվե քաղաքը: Նինոսի կին Շամիրամը, վորի չքնաղ յերեսով ու նուրբ կազմվածքով պարծենում ելին Ասորեստանի հպարտ ազգերը, իմացել եր նրա գեղեցկության մասին և չեր կարողանում հանգիստ լսել նրա անունը: Շամիրամն անտես հալվում եր Արայի կարոտից, բայց քանի վոր ամուսինը կենդանի յեր, նա հայտնապես ցույց չեր տալիս իր սեղը: Բայց լերք Նինոսը մեռավ կամ, ինչպես շատերն ասում են, փախավ Կրետե կղզին իր խորամանկ կնոջ ձեռքից ու Շամիրամը սկսեց կառավարել յերկրը, քանի վոր զավակները դեռ մանկահասակ ելին, — նա չկարողացավ այլնս թագյնել իր սրտի ցանկությունը, անհամար թանկագին նվերներ ուղարկեց Արա գեղեցկին ու դեսպանների բերանով ապսպեց:

— Արա, յեղիր ինձ ամուսին, իսկ յես կլինեմ քեզ կին: Քեզ կընծայեմ Նինոսի անսահման յերկրները, քեզ կինազանդվեն թագավորները, իշխաններն ու մեծամեծները և քո վոտների փոշին կհամբուրեն: Յեզ քեզնից հզոր վոչ վոք չի լինի աշխարհիս յերեսին, ու կփայլենք իս ու դու մեր գահի վրա յերկու աստղերի պես: Շատպիր ինձ մոտ, իմ աննման:

Այսպես եր աղաջում Շամիրամը: Իսկ Արան, վորն ամբողջ հոգով կապված եր իր կին Նվարդի հետ, խստությամբ արհամարհեց Շամիրամի պաղատանքն ու մերժեց դնալ Նինվե:

Շատ անգամ գնացին յեկան դեսպանները, ավելի ու ավելի վոսկի ու անգին ակներ բերելով, բայց վոչնչով չկարողացան գրավել Արայի սիրտը:

Դեսպանները վերադառնալով զմայլված փառաբանում եյին Արայի գեղեցկությունը. նրանց պատմածը լսելիս Շամիրամը կսկծից ու կարոտից գրեթե ուշաթափվում եր:

Այն ժամանակ նա վճռեց բռնությամբ անել տալ Արային այն, ինչ վոր չեր կարողանում անել տալ ընծաներով և աղաչանքներով, — ստիպել դառնալ իրեն ամուսին: Ու հավաքեց իր բազմալեզու ազգերից անթիվ զորք և շտապեց հասնել այն դաշտը, վորը Արայի անունով կոչվում եր Այրարատ: Այստեղ նրա դեմ դուրս յեկավ Արան իր փոքրաթիվ մարդկանցով:

Շամիրամի միտքն Արային սպանելը չեր. կովից առաջ նա խիստ պատվեր տվեց իր զորապետներին.

— Զինի թե սպանեք Արային: Յես կենդանի յեմ ուղում նրան ունենալ: Կենդանի բռնեցնք և կենդանի ինձ մոտ բերեք նրան:

Բայց կովի տաք ժամանակ Ասորեստանի զինվորները չկարողացան ջոկել Արային քաջերի խմբի մեջ ու պատահմանը նրան ել սպանեցին: Վշտից ցնցվեց Շամիրամը

իմանալով նրա մահը և դիակապուտներ ուղարկեց, վոր գորոնեն, գտնեն ընկածների մեջ իր սիրելիի դիակը:

Արայի դիակը գտան ու բերին Շամիրամի ապարանքը: Մեռած ել նա գեղեցիկ ու աննման եր: Առող ու շիվան բարձրացրեց Շամիրամը և չեր ուզում աչքերին հավատար: Մազերը փետելով՝ նա վողբում եր և ասում, վոր անկարելի յե վոր այդպիսի գեղեցիկը յերը և իցե մեռնի:

— Տարեք, մանուկներ (զինվորներ), տարեք այս դիակը իմ ապարանքի վերնատունը: Աղերսենք, պաղատենք առլեզներին*), վոր գան կենդանացնեն գեղեցիկ Արային:

Յերբ Արայի մարդիկ իմացան, վոր իրենց նահապետը սպանվել եւ և նրա դիակը գտնվում եւ թշնամու ձեռքին, նրանք չտեսնված անպատվություն համարեցին այդ իրենց ամբողջ ազգի համար և մեկ մարդու պես վոտքի կանգնեցին, պատրաստվեցին Շամիրամի վրա հարձակվելու, վոր Արայի մահվան վրեժը հանեն ու նրա դիակը խլեն: Շամիրամը դուրս յեկալ նրանց առաջ և ասավ.

— Հրամայեցի իմ աստվածներին, վոր լիզեն Արայի վերքերը, ու նա պիտի կենդանանա:

Յեզ մեր հեթանոս պապերը հավատացնում եյին, վոր արդարեւ Արան կենդանացավ:

Այն ժամանակ Շամիրամը հավաքեց ամենքին ու բարձրաձայն հայտարարեց.

— Առողջացրին աստվածներն Արայի վերքը ու կենդանացրին նրան: Փառավորվի նրանց անունը, վոր մեր աղաչանքը կատարեցին, և թող ավելի պաշտելի լինեն նրանք այսուհետեւ մեր մեջ:

*.) Հեթանոսները թե Առորեստանում և թե Հայաստանում հավատացած եյին, վոր գոյություն ունեն աղլեզ կամ արակեատացներ, վորոնք շներից են ծնվել ու լիզերով կենդանացնում են պատերազմի մեջ ընկած քաջերին:



Յեվ ալդտեղ նա կանգնեցրեց առլեզներին մի նոր արձան ու մեծամեծ գոներ մատուցեց այդ արձանին: Իսկ Արային բռնի պահեց իր մոտ պալատում, մինչև իր մահը:

Շամիրամը մի քանի ժամանակ մնաց այն դաշտում, վորտեղ տեղի յեր ունեցել կռիվը, ապա յերը ամառը վրա հասավ, նա անցավ գեպի հարավ և սկսեց զբոսնել լեռների ծաղկավետ հովիտներում ու դաշտերում: Նա հիանում եր յերկրի գեղեցկությունից, ողի մաքրությունից, աղբյուրների հստակությունից, գետերի կարկաջահոսությունից և ասավ.

— Արծե, վոր մեղ պես թագուհին իր համար մի քաղաք ու մի պալատ ունենա այսպիսի բարեխառն ողի և մաքուր ջրերի մեջ, արծե, վոր տարվա չորրորդ մասը, ամենայն զվարճությամբ այստեղ անցկացնենք, իսկ մնացած հով յեղանակները՝ մեր նիսվելում:

Շատ տեղեր ման յեկավ նա, մինչև վոր յեկավ Աղի (Բգնունյաց) ծովի արևելյան ափը: Այստեղ ծովի ափին նա տեսավ մի յերկարածիք բլուր, վոր տարածվում եր գեպի արևելահյուսիս: Բլրի հարավային ծայրին, ուղիղ գեպի յերկինք, անշեղ բարձրանում եր մի քարաժարությունուառ սարի արևելյան կողմով տարածվում եր մի դաշտաճե հովիտ, վորը ծովի ափին իջնելիս՝ փոխվում եր ընդարձակ և գեղեցիկ ձորի: Սարից թափվում եյին բարեհամ ջրեր, վորոնք վազում ելին ձորակներով և միավորում՝ փառափոր գետեր եյին կազմում: Այս հովտաճե ձորի մեջ կային ցիր ու ցան շատ գյուղեր:


Ահա այս տեղը Շամիրամն ընտրեց իր ամառանոցի համար և հրամայեց, վոր Ասորեստանից և իր իշխած ուրիշ յերկրներից բերեն տամներկու հազար ընտիր և հմուտ գործակորներ, վորոնք լավ գիտելին փայտի ու քարի, պղնձի ու յերկաթի արևելյան ամենալավ առաջնորդ էր:

Յերբ այս ամբողջ բազմությունը յեկավ, հավաքվեց, հնարագետ թագուհին հրամայեց նախ և առաջ գետի ամբարտակը շինել: Տեղ-տեղ ապառաժները կտրեցին, տեղ-տեղ ել խոշոր քարեր ավագով ու կրով շարեցին և շինեցին այն լայն ու բարձր առուն, վոր մինչև այժմ ել գրեթե անխախտ մնում ե և մինչև այսոր կոչվում ե Շամիրամի առու: Քարերն այնպիս ամուսնու ամուր են ծեփած, վոր լեթե մեկն ուղենա մի փոքր քար գոնե պոկել պարասակի համար, ինչքան ել աշխատի՝ չի կարողանա: Այս ամբարտակի մեջ հավաքելով հեռուներից ջրերը՝ Շամիրամը բերում ե, հասցնում նշանակած տեղը:

Այսուհետեւ նա սկսում ե բուն քաղաքի շինությունը: Նա դաս դաս և բաժանում իր գործակորներին և յուրաքանչյուր դասի վրա կարգում ե ընտիր ճարտարապետներ: Շատ տարիներ չարչարվեցին աշխարհի ամեն ծայրերից բանի հավաքած բանվորները, մինչև վոր ավարտեցին հրաշալի շինարարությունը՝ ամուր պարիսպներով և պղնձե դաներով: Քաղաքի մեջ շինեցին ընտիր-ընտիր, կրկնահարկ և յեռահարկ պալատներ զանազան գույնի քարերից, այնպիս վոր մեկ թաղը մյուսից ջոկվում եր առանձին կույնով և բաժանվում եր լայն-լայն փողոցներով: Այս ու այստեղ շինեցին նաև զարմանք շարժող բաղանիքներ: Իր քերած առվի մի մասը Շամիրամն անց կացրեց քաղաքի միջով ամեն տեսակ պետքերի համար, ծաղկանոցներն ու բուրաստանները ջրելու համար, իսկ մյուս մասը հասցրեց ծովակի աջ ու ձախ ափին՝ շրջակայքը ջրելու համար: Քաղաքի շուրջը նա անկել ավեց ամեն տեսակ տերեկափոր և պղնձաբեր ծառեր և մանավանդ բազմաբեր գինու վորթեր:

Բայց այս բոլոր հրաշակերտ շինությունների մեջ առաջին ու ամենից փառավորն այն եր, վոր նա շինեց քաղաքի ծայրին:

«Վան» ասել, այսինքն՝ «Քաղաք», «ապաստարան», Բզնու-
նյաց ծովին ել այդ պատճառով կոչվում եւ այժմ Վանա ծով:



Վանա քարաբլուրը

Նա պարսպել տվեց ժայռի գաղաթը և փորել տվեց
ամուր ապառաժի մեջ դժվարամուտ և դժվարելանելի թա-
գավորանիստ դահլիճներ, ոթևաններ, գանձատներ և խոր
անցքեր, վորոնց նշանակությունը շատերն այժմ չգիտեն:
Ժայռի արևելյան յերեսը, վորն այնքան կարծր է, վոր
յերկաթով անգամ չի կարելի վրան մի զիծ քաշել նա փո-
ղորեկել տվեց և զարմանալի գրերով գրեց իր գործերը:
այսպիսի գրերով չայստանի ուրիշ շատ վալրերում ել
արձանների վրա իր հիշատակը թողեց:

Այսպես շինելով հոյակապ քաղաքը, նա անթիվ բար-
ձություն բնակեցրեց նրա մեջ:

Շամիրամի անունով այս զարմանալի քաղաքը կոչվեց
Շամիրամակեր, բայց ժողովուրդը վերջում սկսեց ուղղակի-

Այստեղ եր Շամիրամն անցկացնում ամառները, իսկ
այդ ժամանակ նինվեյի ու Ասորեստանի վրա կողմնապետ
եր թողնում մարերի նահապետ Զրադաշտ մողին: Վորչափ-
ղեղեցիկ ու հնարապետ եր նա, այնքան ել քաջ ու արի:
Նա շատ նոր յերկրներ գրավեց և կցեց Նինոսի հողերին
և իր զորքերով հասավ մինչև Հնդկաստան: Բայց վերջը
նա այնքան հավատաց Զրադաշտին, վոր իշխանությունը
բոլորովին նրան հանձնեց, իսկ ինքն իր որերը անց եր
կացնում ուրախություններով և զվարճություններով բա-
րեկամների և սիրելիների հետ: Նա վատնում եր Նինոսի
թողած հարստությունները, դանձեր ու պաշտօններ եր
բաժանում իր սիրածներին և չեր մտածում իր վորդիների
մասին:

Նրա վորդիները չափահաս դառնալով՝ մոր յերեսով
ելին տալիս նրա վատ արարմունքը և պահանջում ելին,
վոր իրենց հանձնի հայրական իշխանությունն ու գանձերը:
Եյն ժամանակ Շամիրամը կոտորել տվեց իր բոլոր վորդի-
ներին, բացի կրտսերից՝ Նինվասից, և այնուհետև ավելի-
անձնատուր յեղավ զվարճություններին և շռայլություն-
ներին:

Ասում են, մի որ Շամիրամը դուրս գալով ծովափ-
զբունելու՝ տեսնում եւ մի խումբ մանուկներ, վորոնք զըն-
կում ելին ավագի մեջ գտած մի ուլունք: Թագուհին իս-
կույն հասկանում եւ ուլունքի զորությունը, խլում եւ մա-
նուկների ձեռքից և փոխարենը պարզեներ և տալիս նրանց:
Ուլունքը կախարդական ուժ ուներ: Շամիրամը նրանով
ումն ուղում հմայում եր և իր ցանկություններին սարուել
եր դարձնում, ումն ուղում կորցնում, վչացնում եր:

Յեվ աշխարհը նրա ձեռքին խաղալիք եր դարձել:
Մինչդեռ Շամիրամի ուշըն ու միտքը վայելքների
հետ եր, Զրադաշտ մոգը կամենում եր խորամանկությամբ
նրա իշխանությանը տիրանալ և բոլորի վրա բռնանալ:



Շամիրամը արձակեց իր մազերը, վելորեց պարսատկի պիս...

Աւ նկատեց Շամիրամը այս բանը և գնաց նրա դեմ կըու-
գելու։ Զրադաշտի հետ միացավ Նինվասը։ Պատերազմի
մեջ Շամիրամը պարտվեց և վոտով սկսեց փախչել Հայաս-
տան։ Նա փախչում եր առանց դադար առնելու, ծարա-



Մատուկ Սուրբ Աննա Բայրութի Սույնաց ամսական

փում, ջուր եր խմում և կրկին փախչում, իսկ թշնամիների սուսերավոր զինվորները նրան հայածում ելին։ Սուսերավորները նրան հասան վերջապես, խլեցին նրանից կախարդական ուղունքը և քշեցին իրենց ձիերը, վոր ուղունքը Բզնունյաց ծովը ձգեն։ Հոգնած, ուժասպառ՝ Շամիրամի արձակեց իր շքեղ մազերը, վոլորեց պարսատկի պես, մեջը մի ապառաժ դրեց ու ուժեղ ձեռքով սկսեց պտտացնել, վոր արձակի փախչողների յետելից։ Բայց սաստիկ կատաղությունից այնպես ուժով եր պտտացնում այդ պարսատիկը, վոր մազերը պոկ յեկան, ապառաժը դուրս ընկավ, թուավ հեռու^{*)}, իսկ ինքը Շամիրամը հուսահատությունից տեղն ու տեղը քար կտրեց.

Սուսերավորները փախցրին ուղունքը, ձգեցին վանա ծովը։ Այն որից ի վեր ժողովուրդն ասում եր. «Ուղունք Շամիրամա ի ծով», այսինքն՝ թե «Շամիրամի ուղունքը ծովս ընկավ», յերբ ուզում եր մեկին ասել թե՝ բոլոր հնարիներդ ու խորամանկություններդ դուր անցան, ջուրն ընկան։

Ալդ պատերազմում Շամիրամի հետ սպանվեց Արան. Արային հաջորդեց Անուշավանը, վորին տարան Նինվե։ Արամը քաջ եր, Արան գեղեցիկ, իսկ Անուշավանը՝ հանձարեղ և իմաստուն, ճարտար լեզվանի և ամեն գործի մեջ շնորհքով։ Նա կոչվում եր Սոս, վորովհետեւ փոքրից նվիրված եր սոսի (բարդու) ծառերի անտառին։ Այս անտառը Արմենակ նահապետն եր տնկել Արմավիրի մոտերքում։ Այստեղ քուրմերը հետեւում ելին նվիրական, սուրբ ծառերի տերենների սոսակյուռնին և շարժումներին՝ ողի հանդարս կամ սաստիկ շարժվելու ժամանակ, և դուշակություններ ելին անում։

^{*)} Արտամետ գյուղի մոտ, Վանից վոչ հեռու, ցույց հատալիս այդ ապառաժը, վոր ընկել և խոր փոս և առաջացրել գետնի մեջ։

Անուշավանը բավական տարիներ մնաց Նինվեյի պաշտում՝ անպատճիվ և արհամարհված, բայց վերջն իր խելքով և բարեկամների ոգնությամբ ստացավ նախ իր հայրենի յերկրի մի մասը, իսկ հետո ամբողջը՝ կառավարելու իրավունքով, սակայն պիտի հարկ վճարեր ասորեստանցոյ։

Այսպես հարկատու դարձավ Հայոց աշխարհը և նսեմացավ քաջասիրտ Արամի յերկրի փառքը։

Այսպես եր, վոր Պարույրը դառավ հայոց առաջին
պսակակիր թագավորը:

V

ՏԻԳՐԱՆ ՅԵՐՎԱՆԴՅԱՆ

Յերկար ժամանակ Անուշավան Սոսանվերից հետո
Հայաստանի նահապետները հարկ վճարեցին ասորեստան-
ցոց: Շատ հարստություններ հոսեցին Հայոց յերկրից Նին-
վեյի գանձարանը. Ասորեստանի անկուշտ թագավորներն
ու պալատականները քանի գնում ավելի ու ավելի զվար-
ճությունների յետնից ելին ընկնում, ապրում ելին շուայլ
ու անմարդավայել, իսկ գործերը կառավարում ելին կա-
շուակեր, փչացած պաշտոնաները, վորոնք ճնշում ելին
պատակ աղքերին. աշխարհի մեջ վոչ արդարություն կար,
վոչ ել ապահովություն:

Ասորեստանից դեպի արեելք, Զագրոշ լեռների մյուս
կողմը, Ուրմիո լճից մինչև Կասպից ծովը և Յերասխ
գետն այդ ժամանակ բնակվում ելին մարեր կամ մեղա-
ցիք: Մարերի խորամանկ ու քաջ թագավորն ոգուտ քա-
ղեց Նինվեյի թագավորի անփութությունից ու ցոպ վար-
քից և խորամանկությամբ ու փողով սկսեց բարեկամներ
գրավել Ասորեստանի զորավարների և կառավարիչների
մեջ: Նա իր կողմը զբավեց բարելացոց և պարսից իշ-
խաններին. այդ ժամանակվա հայոց նահապետին ել, Պա-
րույրին, նա խոստացավ թագավորական շուք և պատիվ և
այսպիսով բազմաթիվ կողմանակիցներ շահելով՝ գնաց Նին-
վեյի վրա, վերցրեց այս քաղաքը, այնտեղ մի կուսակալ
նշանակեց, իսկ ինքը վերադարձավ իր յերկիրը:

Այսպես ընկալ Ասորեստանը, նրա տեղ ուժեղացավ
Մարաստանը:

Պարույրից հետո իններորդ թագավորն եր Յերվանդի-
կորդի Տիգրանը: «Սա հայոց թագավորներից ամենից
հզորն եր, ամենից խմաստունը և ամենից քաջը: Շատ թա-
գավորներ են Տիգրան անունը կրել, բայց այս Յերվան-
դիան Տիգրանը մի և միայնակն եր, վոր իր նման քաջ
պատերազմողների գլուխ կանգնելով՝ քաջություններ կա-
տարեց, մեր ազգը բարձրացրեց, նախանձելի դառավ իր
ժամանակակիցների համար և ցանկալի ու որինակելի հետ-
նորդների համար: Նա մեր ընակության սահմանները հին
սահմաններին հասցըց և մեզ, վոր ոտարների լծի տակ
ելինք, վոչ սիայն լծից աղատեց, այլ և լուծը բազմաթիվ
ուրիշ աղքերի վրա դրեց»:

Այսպես ելին նրանով պարծենում մեր պապերը և
ափելացնում ելին.

«Նրա մազերը շեկ ելին և գանգուր, յերեսը զվարթ,
սպիտակ ու կարմիր, աչքերը քաղցրածպիտ, կազմվածքն
ամուր, թիկունքը լայն, ազգըները լիք, վոտները գեղեցիկ,
իսկ ինքը պարկեցտ եր և չափավոր ամեն բանի մեջ, թե
կեր ու խումի և թե զվարծությունների մեջ, և մեծիմաստ
եր ու պերճախոս, մի խոսքով ամեն բանով կատարյալ
եր: Փողովուրդը բառ չեր գտնում գովելու և փառաբա-
նելու նրա արդարամտությունն ու հավասարասիրությունը»:
Նա ամենքին հավասար աչքով եր նայում, ամենքի արար-
ժունքն իր մտքում հավասար լծակով եր կշռում, վոչ իրե-
նից լավերին եր նախանձում, վոչ ել իրենից վատերին
եր արհամարհում, այլ աշխատում եր ամենքի վրա հավա-
սար տարածել իր խնամքի վեշերը»:

Բայց քաջ և իմաստուն Տիգրանն անվանի եր վոչ

միայն իր արդարամառությամբ, աշխարհին հայտնի յեր և նրա ընկերասիրությունը: Այդ լավ գիտեր մարաց թագավոր Աժդահակը, վորին մեծ վիշտ եր պատճառում Տիգրանի բարեկամությունը պարսից թագավոր Կյուրոսի հետ:

Աժդահակը կասկածանքով եր նայում Կյուրոսին, վախում եր նրա որից որ ուժեղանալուց, և չեր կարողանում հանգիստ քնել. նա շարունակ մտածում եր՝ չլինի թե Տիգրանն ու Կյուրոսը միանան և իր վրա արշավեն: Շատ անգամ նա հարցնում եր իր խորհրդակիցներից՝ չգիտե՞ն արդյոք մի հնար, վոր կարողանան այդ յերկուսի սիրո կապը կտրել:

Յեվ միշտ այսպես շփոթության մեջ եր:

Նա լսել եր, թե ինչպես Տիգրանը կարգավորել եր իր բազմաթիվ զորքերը: Տիգրանը հետեակներին ձիերի վրա յեր նստեցրել, պարսավորներին աղեղ եր տվել, շերտավորներին (կացնով զինվածներին): սուր ու նիզակ, ով վոր զրահ չուներ, յերկաթե զրահ ու վահան եր տվել: Յերբ այս ամբողջ զորքը մեկ տեղ եր հավաքվում, բավական եր թշնամիները տեսնելին միայն նրանց պահպանակների և զենքերի փայլմունքն ու շողջողյունը, վոր սարսափահար փախչելին: Այս զորքով քանի՛քանի յերկըներ եր նա նվաճել:

Ահա այս ուժիցն եր սոսկում մար Աժդահակը:

Մի գիշեր սաստիկ մտածելուց նա զարհուրելի յերազ և տեսնում: Տեղից վեր և թոշում և չնայելով վոր գեռ շատ մութ եր և սովորություն չկար գիշերով կանչել խորհրդականներին, իսկույն ուղարկում է նրանց յետելից:

Յեկան, հավաքվեցին խորհրդակամները. տեսնում են՝ թագավորն աչքերը գետնին անշարժ հառել ե, յերեսը տրտում նստած ե, խորը հոգոցներ և հանում և մռնչում:

Հարցնում են՝ ինչ ե պատահել նա յերկար վոչինչ չի պատասխանում և վերջապես, այլևս չկարողանալով

ծածկել իր կասկածները՝ վշտաբեկ այսպես և պատմում:

«Այսոր յերազում, ով սիրելիներ, մի ինչ վոր անծանոթ յերկրում եյի, մի բարձր լեռան մոտ, վորի գաղաթը կարծես պատած լիներ սաստիկ սառնամանիքով. ինձ ասացին, վոր յես Հալոց աշխարհում եմ: Յերկար նայում եյի սարի գաղաթին և այնտեղ ինձ յերևաց նստած մի բարձրահասակ և կարմրալու գեղեցիկ կին՝ ծիրանի հագին և յերկնային քողը յերեսին:

«Յեվ յերբ յերկար հիացած նայում ելի այդ տեսիլքին, հանկարծ այդ կինը ծնեց յերեք կատարյալ գլուցազուններ: Առաջինն առյուծի վրա հեծավ ու թռավ դեպի արևմուտք, յերկրորդը մի ընձու վրա նստեց և գիմեց դեպի հյուսիս, իսկ յերրորդը մի ահագին վիշտավ սանձեց և յեկավ, հարձակվեց իմ տերության վրա: Յեվ հանկարծ յերազս խառնվեց, և մեկ ել ինձ տեսա իմ պալատի տանիքի վրա, վորը զարդարված եր գեղեցիկ գույնգույն շատրվաններով. այնտեղ կանգնած եյին մեզ պսակող աստվածները հրաշալի տեսքով, իսկ յես ձեզ հետ զոհեր ելի մասները հրաշալի տեսքով, իսկ յես ձեզ հետ զոհեր ելի մասուցում նրանց և խոնկ եյի ծխում: Հանկարծ վեր նայեցի տեսսա, վոր այն վիշտավի վրա նստողը, արձվի նմանթեսա, վոր այն վիշտավի վրա նստողը, աստվածի մեջ կածներիս կործանել, Յես նետվեցի նրա և կուռքերիս մեջ, գածներիս ինքս ընդունեցի, և սկսվեց իմ ու դյուցազունի մեջ կատաղի կոփիվ: Նախ մենք նիզակներով միմանց վիշտավեցինք, և մեր արյունը վտակի պես հոսեց ու տարսվորեցինք, և մեր արյունը վտակի պես հոսեց: Հետո շարունակեցինք կովել սիրել յերեսին ծով բռնեց: Հետո շարունակեցինք կովել զենքերով: Բայց ինչ յերկարացնեմ: Վերջն այն յեռը զենքերով:

Բայց ինչ յերկարացնեմ: Վերջն այն յեռը զենքերով: Պարզ ե, վոր Տիգրանից մեզ մեծ վտանգ է սապանում, վոր նա հարձակվելու յեմեզ մեծ վտանգ է սապանում, վոր նա հարձակվելու յեմեզ վրա: Խոսեցնք, ասացեք՝ ինչ խորհուրդ կըտաք: Ձեզանից ով և ուզում ինձ գահակից լինել»:

Յեվ թագավորը մեկի մյուսի խորհուրդը լսեց, շնորհակալություն հայտնեց և վերջը կրկին ինքն այսպես խոսեց.

«Շատ լսելոք, շատ իմաստուն խորհուրդներ լսեցի ձեզանից, սիրելիներ, հիմա տեսեք թե յես ինչ եմ մտածում: Թշնամուց զգուշանալու ամենալավ միջոցն այն ե, վոր սիրող ձևանանք և սիրո պատրվակով դավ սարքենք: Կուզենք Տիգրանի գեղեցիկ քույր Տիգրանուհուն մեղ կին և յերբ մեր ու հայոց թագավորի մեջ հաճախ յեկող գնացող կլինի, ծածուկ կկաշտոենք Տիգրանի բարեկամներին, պարզեներ և պատիվներ կխոստանանք և նրանց ձեռքով սրով կամ թունով նրան սպանել կտանք և կամ վոսկով մեր կողմը կզրավենք նրա կողմնակիցներին, վոր նա մենակ մնա, և այսպես հեշտությամբ կբռնենք նրան իբրև մի անզոր տղայի»:

Այս միտքը ամենքը հավանեցին, և Աժդահակը գրեց մի նամակ ու խորհրդականներից մեկին հանձնելով՝ բազմաթիվ գանձերով ուղարկեց Տիգրանին:

Իսկ նամակի մեջ գրված եր արապես.

«Գիտե սիրելի յեղբարությունդ, վոր աշխարհիս յերեսին աստվածները վոչ մի ավելի ողտակար բան չեն պարզեել մեղ, քան թե սիրելիների թիվը բազմացնելին ե, մանավանդ իմաստուն և հզոր սիրելիների: Այն ժամանակ և՛ դրսից վոչ մի թշնամի չի համարձակվի հարձակվել, վոչ ել ներսում վորեե ապստամբ գլուխ կբարձրացնի: Ուստի՝ տեսնելով, թե ինչ մեծ ողուտներ են ծագում բարեկամությունից, յես մտածեցի ավելի խորը հաստատել իմ և քո մեջ յեղած սերը, վոր ամեն կողմից ուժեղանալով յես և դու ապահով պահենք մեր տեղութունները: Իսկ այս կլինի այն ժամանակ, յերբ դու ինձ կնության կտաս Հայոց ուղիորդին—քո քույր Տիգրանուհուն, յեթե միայն բարի յես կամենում նրան, վորովհետեւ նա կլինի ինձ մատ թա-



Աժդահակի յերարք

գուհիների թագուհի։ Վողջ յեղիք, մեր թագակից և սիրելի յեղբայր»։

Այս նամակն ստանում է Տիգրանը և վոչ մի նենագություն չկասկածելով՝ պատվով, ինչպես թագավորների սովորությունն եր, ուղարկում է իր քրոջը Մարաստան։ Աժդահակը Տիգրանունուն տիկնանց տիկին նշանակեց վոչ թե միայն նրա համար, վոր մտքում նենգություն ուներ, ալ և վոր աղջիկն իրավ շատ գեղեցիկ եր։ Այսուհետեւ վոչինչ չեր անում առանց նրա խորհրդի, նրա խոսքով եր ամեն գործ կարգադրում, նրան հնազանդվել եր ամենքին հրամայում։

Յեվ այսպես աշխատելով աղջկա սիրու շահել՝ Աժդահակը սկսում է քաղցր լեզվով նրա ականջին շնչալ։

— Զգիտես թե ինչ նախանձու կին և Տիգրանի կին Զարուհին. նա աչք և ձգել քո տիկնանց տիկնությանդ վրա՝ և մեր գեմ և գրգռում Տիգրանին, վոր նա գառնա Արյաց (մարերի) թագավոր, ինքն ու զառնա Արյաց թագուհի։ Ի՞նչ պիտի լինի սրա վերջը։ Առաջ յես կմեռնեմ, իսկ հետո Զարուհին կդառնա Արյաց տիկին և աստվածուհիների տեղը կնստի։ Լավ մտածիր այս վտանգի մասին և մեկն ու մեկը ընտրիր. կամ առաջվա պես յեղբորդ հավատարիմ մնա, սիրիր նրան, և ծաղը ու ծանակ յեղիր ամբողջ Արյաց ազգի առջև, կամ գլխուդ բարին հասկացիր և մի հնար գտիր այդ խայտառակությունից ազատվելու։

Ճիշտ ե՝ Աժդահակը չեր սպառնում Տիգրանուհուն, վոր յեթե իր կամքով չվարվի, սպանել կտա նրան, բայց իմաստուն աղջիկն իսկույն հասկացավ նրա խորամանկ խոսքերի մեջ ծածկված միտքը։ Նա միամիտ ձևացավ։ Սիրո բառերով հասկացրեց Աժդահակին, իբր թե ինքն ել այդ լուրից վրդովված և անհանգստացած ե և իբր թե միջոցներ և մտածում յեղբոր ու Զարուհու լարած թակարդից

ազատվելու, իսկ մինչ այդ գաղտնի, ստերիմ մարդկանց ձեռքով, ամենը հայտնեց յեղորը, թե Աժդահակի նենգությունը և թե նրա դավաճանությունը։

Յեվ ահա Աժդահակը պատգամավորներ և ուղարկում Հայոց թագավորի մոտ և ասում։

— Շտապիր, յեկ ինձ տեսության մեր տերությունների սահմանագլխի մոտ. շատ կարեվոր ասելիք ու գործ ունեմ քեզ հետ, վորի մասին վոչ գրով կարելի յե գրել, վոչ ել մարդու բերանով ապսպրել, այլ միայն կարելի յե յերես առ յերես առանձին խոսել։

Տիգրանն իմանում եր՝ ի՞նչ սև գործի համար եր իրեն հրավիրում Աժդահակը։ Նա ավելորդ համարեց ծածկել իր զայրույթը։ Ել ուր եր այն սուրբ բարեկամությունը, վորի անունից առաջ խոսում եր իր հետ Աժդահակը։ Տիգրանը նամակով հայտնեց նրան այն ամենը, ինչ վոր դիզգել եր իր խոցված սրտում, և յերեսովը տվավ նրա խարդախությունը։ Այսուհետեւ ալ ևս ի՞նչ խոսքերով, ի՞նչ խորամանկությամբ կարող եր Աժդահակը նրան խարելքնացնել։ Նրանց մեջ սկսվեց բացարձակ թշնամություն

Յերգանդյան Տիգրանը ժողովեց ընտիր գնդեր իր բոլոր յերկրներից — և կապագովկացիներից, և վրայիներից, և աղվաններից, և Մեծ ու Փոքր Հայքի բնակիչներից, — ու «վսաղաց», արշավեց մարաց աշխարհի կողմերը։ Աժդահակին մեծ վտանգ եր սպասում, բայց կոփը միաւժամանակ հետաձգում եր, վրովինետե Տիգրանը դեռ տատանվում եր ու շարունակ մտածում եր Տիգրանուհու մասին, թե ի՞նչպես անի, ի՞նչ ձար գտնի իր քրոջը մարաց պալատից ազատելու։ Յեվ վերջապես մի հնարով քրոջը Աժդահակի ձեռքից փախցնելով՝ նա համարձակ, տռանց վախենալու առաջ գնաց և կանգնեց Աժդահակի զորքերի դիմաց։

Սոսկալի կոփ սկսվեց. քաջերը քաջերին ելին պա-

տահել ու վոչ վոք չեր ուզում թիկունքը ցույց տար
փախչել։ Շատ ժամեր տեսեց ճակատամարտը։ Տիգրանը տե-
սավ Աժդահակին, մոտեցավ նրան և այնպես զարկեց նի-
զակով նրա կրծքի զրահին, վոր նիզակը ջրի պես ծակեց
յերկաթե ամուր զգեստը և շամփրեց Աժդահակին, իսկ
յերբ Տիգրանը նույն ուժով ձեռքը յետ քաշեց, Աժդահակի
թոքերի կեսը նիզակի ծայրի հետ դուրս յեկավ։ Սարսա-
փահար յեղան մարերը, տեսնելով իրենց թագավորի մահը,
ել չդիմացան հայերի հարձակմանն ու ցիրուցան փախան։

Այսպես ընկավ-վերջացավ մարերի տերությունը։

Աժդահակի առաջին կինը, Անուշը, և Աժդահակի ցե-
ղից բազմաթիվ աղջիկներ ու պատանիներ գերի ընկան
հայերի ձեռքը։ Տիգրանը նրանց բնակեցրեց Մասիսի արե-
վելյան լանջին, այնտեղ, ուր լեռան վրա լայն փլվածք ե-
կազմվել ահազին յերկրաշարժից։ Ավելի քան՝ տասը հա-
զար մարդ նրանց հետ գերի ուղարկվեցին Հայաստան և
բնակվեցին Մասիսի ստորոտում, երկար տարածության վրա։
Յերասխի յերկու ափերին։ Այս մարերը պիտի ծառայելին
իրենց տիրուհի Անուշին։ Հետո Անուշից ծագեց հզոր
իշխանական տուն, Մուրացան նախարարությունը, վոր
յերգերի մեջ հաճախ «վիշապագուն», այսինքն՝ վիշապնե-
րից ծնված եր կոչվում, վորովհետև «Աժդահակ» – նշանա-
կում ե ոձ կամ վիշապ։ Այս տունը սկսեց վերջը խոսել
հայերեն և բոլորովին մոռացավ իր մարաց լեզուն։

Իսկ սիրելի, գեղեցիկ ու մեծիմաստ քույր Տիգրա-
նուհուն Տիգրանը թագավորավայել պատվով ու շուքով
ուղարկեց իր շինած Տիգրանակերտ քաղաքը և այն կող-
մերի բոլոր գավառների բնակչությանը հրամայեց նրան
ծառայել։

Աժդահակի ամբողջ աշխարհն անցավ Տիգրանի բա-
րեկամ պարսից թագավոր Կյուրոսին, վորի հետ նա շատ
յերկրներ նվաճեց, անթիվ անհամար վոսկի և արծաթ,

պատվական քարեր, թանկագին մանվածքներ, գույնզգույն
զգեստներ բերեց, լցրեց Հայաստան, թե կանանց և թե
ազամարդկանց համար։ Այդ զգեստներով ամենատգեղները
սքանչելի գեղեցիկ եյին յերեսում, իսկ գեղեցիկները՝ հո-
գուցազունների նման։ Յեվ մեղր ու կարագով կերակրեց
Յերվանդյան Տիգրանը մեծ ու պստիկին, ու այնպես յերջա-
նիկ և ապահով եր իրեն զգում նրա որով հայ ժողովուրդը,
վոր հետո հայերը միշտ յերանի եյին տալիս նրա թագա-
վորության ժամանակ ապրողներին և ասում ելին։

— Յերնեկ մենք ել նրա ժամանակ աշխարհ յեկած
լինելինք, նրա տեսությամբ ուրախանայինք և վտանգ-
ներից ազատ մնայինք։

Այսպես եր հավատում այն ժամանակվա հայ ժողովուրդը:

Բայց յերկնքից վոչ պակաս հրաշալի և զարմանալի յերկիրը: Նա յե պահում սերմերն իր կրծքի մեջ և մթնում գուրգուրում, տաքացնում նրանց. Նա խորը իր սրտի մեջ ծածկում ե հակայական ծառերի արմատները: Իսկ հետո, յերբ գալիս ե գարունը, նա իր կրծքից գուրս ե թողնում լույս աշխարհ անթիվ ծաղիկներ. փոռւմ ե ծառերի ճուղերին բաղմաձեւ տերեներ, պտուղներ ե լցնում, սերմեր և հատիկներ ե հասցնում, վոր վերջը՝ ձմեռվա ժոտենալիս նորից թափվեն, թագնվեն նրա մայրական գոգում:

Ի՞նչքան բարություններ ե տալիս յերկիրը մարդուն: Հայը պաշտում եր նրան յերկնքի հետ հավասար և մինչեւ վերջերս ել յերդգելիս՝ «Յերկինք-յերկեր» վկա յեր կանչում:

Հեռավոր հորիզոնի մոտ իրար համբուրում են յերկինքն ու յերկիրը: Ամեն լուսադեմին արևելքում խավարը կովում ե լույսի հետ, յերկինքն ու յերկիրը կարծես ցնցվում-չարչարվում են, արյուն և թափվում և կարմիր ներկում ամբողջ յերկնային անեղը ծովը: Ավելի ու ավելի յե բոցավառվում այն կողմը. կարծես յեղեգներ լինեն վասիելիս, կարծես ծուխ լինի բարձրանալիս ուղիղ դեպի վեր և հետո իջնելիս, կարծես բոցեր լինեն հեռու վեր ձգվելիս ու նորից հանգչելիս: Ցոլքերն ավելի ու ավելի սաստկանում են և արդեն յերկնքի կեսն են բռնում, ու հանկարծ այդ հրդեհի միջից գուրս ե վազում լայներես արեգակը, նոր զարթնած ուրախ պատահնու նման: Դեռ կարելի յե նրան նայել առանց վախենալու, վոր աչքերդ կծակծկի: Ի՞նչպես կարմիր ե նրա կլոր դեմքը, ի՞նչպես խարտյաշ ե նա, հազար-հազար աչքերով մեզ ե ժպառմ: Գլխի մազերը

VI

ՎԱԼԱԳՆ

Այն դարերում, յերբ ապրում եյին Հայկը, Արամը և Տիգրան Յերվանդյանը, Հայոց աշխարհի բնակիչները դեռ հեթանոս եյին: Նրանք պաշտում եյին բազմաթիվ աստվածներ: Շրջապատող ամբողջ բնությունը նրանց աչքում լի եր զանազան աստվածություններով:

Իրենց զլխներից վեր նրանք տեսնում եյին տարածված ընդարձակ յերկնակամարը, վորը հորիզոնի մեկ ծայրից մինչև մյուսը գրկել ե գետինը: Նա կանոնավոր կերպով մեկ լուսավորվում ե, մեկ խավարում, ճանապարհ ե բանում գլորվող արևի և լուսնի համար, պապղում ե անհամար աստղերով և թափում ե մայր գետնի վրա անձրես փրկարար կաթիլներ: Յեկ յերկինքը հայի աչքում մի կենդանի եյակ եր, մի հզոր աստված:

Յերկինքը յոթն շերտ ուներ. նրա ստորին շերտը՝ ամպեղեն ե, իսկ մյուս շերտերը՝ ջրերի անսահման ծով են և վերջանում են յերկնային ովկիանոսով: Այստեղ, վերեսում, անհուն ջրեր են ամբարված, վորոնք բղխում են կաթնաղբյուրներով: Ամպեղն յերկնային աստծու կովերն են. ամեն յերեկո նրանք իջնում են գետին արածելու, իսկ առավոտան՝ ցող թողնելով բույսերի վրա, կրկին վերադառնում են յերկինք և խմում են արնաեղի կաթնաղբյուրներից: Նրանց ծերեիցն են «կաթում» անձրես «կաթիլները»: Յերբ ամպեղը յերկնքում գոռզուռում են, յերկնային կովերն են այդ, վոր ձայն են հանում արյունածովի, ծիրանի ծովի միջից:

վառվում են կրակի պես, իսկ մորուքը բոցեղեն եւ Նա կայտառ, խաղաղով արագ վազում եւ առաջ և ամենքին կանչում եւ գործի: Հեթանոս հայը պաշտում եր այդ ծագող արեին, յերկնքի, յերկրի և ծիրանի ծովի ծնունդ—զավակին, Վահագն եր կոչում նրան և աղոթելիս նայում եր նրա կողմը, դեպի արեելք, ուր բացվում եւ «աղոթարանը»:

Յերկներ յերկին, յերկներ յերկիր,
Յերկներ և ծովի ծիրանի.

Յերկն ի ծովուն ուներ և զկարմրիկ յեղեգնիկն.
Ընդ յեղեգան փող ծուխ յելաներ,
Ընդ յեղեգան փող բոց յելաներ.

Յեվ ի բոցուն վազեր պատանեկիկ խարտյաշ.
Նա հուր հեր ուներ,
Ապա թե բոց ուներ մորուս,
Յեվ աչկունքն եյին արեգակունք:

Այսինքն թե՝

Յերկնում*) եր յերկինքը, յերկնում եր յերկիրը,
Յերկնում եր ծիրանի ծովը.
Յերկունքը ծովում բռնել եր և կարմրիկ յեղեգնիկն.
Յեղեգնի փողից ծուխ եր յելնում,
Յեղեգնի փողից բոց եր յելնում,
Յեվ բոցի մեջ խարտյաշ պատանեկիկ եր վազում.
Նա կրակ մազեր ուներ,
Ապա թե բոց ուներ մորուքը,
Յեվ աչքերն եյին մի-մի արեգակ:

Արշալուսին ամեն մարդ տեղից վեր թոչելիս, զգում
ե իր մեջ թարմություն և ուժ. դրա հետ միաժամանակ
մեր նախնիքների սրտից փախչում եր ամոթալի յերկյուղը,
վոր դիշերվա խավարի մեջ աննկատելի բռն եր դնում
նրա հոգու մեջ: Արդ ժամանակ թույլն ել իրեն քաջ եր

*) Յերկնել—ծննդյան ցավերով բռնվել.

զգում և անհաղթելի: Ուվ ե այդ քաջություն ավողը:
Վահագնն ե, ասում եյին մեր հեթանոս նախնիները, նա,
վոր ինքն ել քաջերից քաջն ե, քաջության աստվածն ե:
Յեվ յերբ նա չեր յերկում յերկնակամարի վրա, գիշերով,
հայը չեր սիրում պատերազմի դուրս գնալ:

Բայց միայն քաջությունը չե, վոր տալիս ե վա-
հագնը: Արեւ ծագելուն պես ամեն շնչավոր զարթնում ե
քնից. թռչունները դեռ կամացուկ, հետո հետագիտե ավելի
ու ավելի բարձրաձայն ծլվում են, վոչխարներն ու կովերը
բառաչում են, ձին խրխնջում ե,—իսկ հովիվն ու հոտաղը
իրենց քաղցր յերգն են կլկացնում:

Ամեն արարած լիակուրծ ներս ե շնչում առավոտյան
շինչ ողը և զվարթ-զվարթ ձայն ե հանում:

Վահագնն ե ամենքին յերգեցնողը, նա յե յերգի աստ-
վածը, ասում եյին հեթանոս հայերը:

Հայոց յերկրի ամեն ծայրերից բամբուահարները դի-
մում եյին դեպի Աշտիշատ: Այստեղ եր կանգնած Վա-
հագնի սենյակը, կամ Վահեվահյան մեհյանը Վահագնի
կուռքով: Այստեղ եր, վոր Վահագնը յերգի շնորհքը բա-
ժանում իր ընտրյաներին:*)

Ծագող արեւ ամենքին և քաջ եր դարձնում, և սո-
վորեցնում եր յերգել:

Բայց յերբեմն, նույնիսկ լույս ցերեկով, մարդուս
աշքից ծածկվում ե արեի պայծառ յերեսը: Թուխպերը
գալիս պատում են նրա դեմքը. այդ սե-սե ամպերը
վիշապներ են,—ասում եյին մեր պապերը,—նրանք կա-
մենում են կապել յերկնային ջրերը, թուլ չտար վոր
ջրերը թափվեն յերկրի վրա. նրանք պաշարում, բռնում
են ամբողջ յերկինքը:

*) Աշտիշատը այժմյան «Մշութան ս. Կարապետի» վան-
քից հեռու չեր: Մի ժամանակ և մեր կույր աշուղները դիմում
եյին այստեղ իրը թե ս. Կարապետից յերգի շնորհք ստանալու:

Ու սկսվում ե վիշապների և վահագնի մեջ մի ահեղ կռիվ։ Աստծու ձեռքին փայլում ե կայծակը, և կայծակով նա հարվածում ե վիշապներին։

Յերբեմն ել այդ վիշապները բարձրանում են գետնի վրայից։

Տեսել եք «սատանի քամիներ»*): Ոձերի պես նրանք պտտվում են գաշտերում և ճանապարհներին, վոլորվելով և փոշի բարձրացնելով։

Յերբեմն, յերբ սաստիկ քամիներ են սկսում փչել, այդ պտըտվող սյունն ավելի ու ավելի ծեծանում, ձգվում ե վեր, այդ միջոցին թուխպերն ել սկսում են վոլորվել ու պտըտվել և ճագարի պես ձգվել ցած։ Յեզ ահա փոշու սյունը միանում ե ամպեղեն ճագարի հետ և կազմում ե մի մեծ ոձ, վորի գլուխը յերկնքումն ե, իսկ պոչը՝ գետնին։ Կատաղած վոլորվում ե այդ թարթարը, ահազին ծառեր ե արմատից պոկում, քանդում ե տներ, տաճարներ, հավշտակում-բարձրացնում ե մարդիկ, կենդանիներ և հեռու գեն շպրտում։ Իսկ յերկնքն այդ միջոցին խավարած, փայլակը փայլում ե, կայծակն ակոսում ե ամբողջ յերկնակամարը, սոսկալի վորոտմունքը դղրդացնում ե արարաշխարհը։ Այդ Վահագն ե վեր բարձրացրել չար վիշապին, նա յե նրան քաշել, քաղել ներքեց, ու ահա իր կայծակե թրով ծեծում ե նրան, զարնում, ջախջախում, մինչև վոր վիշապը հաղթված՝ վայր ե ընկնում, յերկնքի ջրերը բացվում են և առատ հոսում են յերկրի վրա, հետո բերելով ցեխ գարձած փոշի և ավագ։

Մրա համար ե, վոր Վահագնին կոչում ելին Վիշապահաղ։

Վահագնի քաջադործությունների մասին հնում շատ բաներ ելին պատմում։ Որինակ՝ վոր մի որ ձմեռը՝ հարդը (դարմանը) պակասել եր յերկնային կովերի համար Վա-



*) «Սատանի քամի»—պառատահողմ։

հագնը գնում ե ասորոց Բարշամ նահագետի մոտ, վորին նույնպես աստված եյին համարում ասորիները, հարդ ե գողանում նրանից ու փափչում յերկինք։ Բայց շտապ փախչելիս ճանապարհին նա թափթփել ե հարդը, մինչեւ կիմա յել յերկնակամարի վրա յերեռում ե հարդի սպիտակ հետքը, վորը ձգվում ե հարավից դեպի հյուսիս և կոչվում ե Հարդգողի կամ Դարմանգողի ճանապարհ։

Բայց կային Հայաստանում այնպիսիները, վորոնք պնդում եյին, վոր իբր թե Վահագնը ծնվել ե վոչ թե յերկնքից, յերկրից և ծիրանի ծովից, այլ հողեղեն մարդուց և վերջը միայն քաջագործությունների համար աստվածացել ե։

Ո՞վ կարող եր լինել այդ քաջի հողեղեն հայրը։ Անշուշտ միայն Յերվանդան Տիգրանը, քաջ նահագետը, նա, վորը մի հարվածով իր յերկար նիզակով սպանեց մարդաց Աժդահակին, այդ «ոձին», «վիշապին»։

Ասում ելին իբր թե Տիգրանը ունեցել ե յերեք վորդի, և այդ վորդիներից կրտսերն եր Վահագնը, վորը թագավորել ե։ Վահագնից ծագել ե Վահնունիների կամ Վահնունիների սրբազն ցեղը, վորին պատկանում եր Աշտշատն իր բնակիչներով և Վահագնի սենյակով։ Նրանք քըրամագետներ և քրմեր ելին այդ տաճարում և իրենց ողակին հավաքում ելին այն նվերները, վոր ուխտավորները բերում ելին Վահագն աստծուն։

VII ՎԱՂԱՐՇԱԿ

Տիգրան Յերվանդանից հետո մի քանի թագավորներ նույնացին Հայաստանում, բայց նրանցից վոչ մեկը նրա պես փառավոր գործեր չկատարեց։ Նրանք այնքան թուլացան, վոր չկարողացան պաշտպանել հայրենի աշխարհն առար աշխարհականերից, ու յերկիրն սկսեց ծառայել հարևան պարսիկներին։ Բայց Մակեդոնացոց Ալեքսանդր թագավորը կործանեց պարսից տերությունը և առավ նրանց ձեռքից Միջագետքն ու մյուս հարևան յերկները։ Այն ժամանակ ահազին շփոթություն ընկավ Հայոց աշխարհում։ ամեն մեկը տեղից վեր եր կենում տիրելու աշխարհին, յերկրի կարդ ու կանոնը խառնվեց, և վոչ մեծն եր յերեռում, վոչ ել փոքրը։

Ահա այդ ժամանակ Կասպից ծովի հարավ-արևելյան ափին, լեռնոտ Պարթևաստանում, յերևաց մի քաջ իշխան՝ Արշակ անունով։ նա կարողացավ ազատել իր յերկրը մակեդոնացոց ձեռքից և հետո սկսեց իրեն հնագանդեցնել հարևան ազգերը։ Նրանից ծագեցին հզոր թագավորներ, Արշակունիներ, վորոնք ընդարձակեցին իրենց հողերը թե արևելքից, թե արևմուտքից և թե հարավից։ Այդ Պարթև թագավորներից մեկը, Արշակ Մեծը մաքրեց մակեդոնացիներից ամբողջ Իրանը և հասավ մինչև Միջագետք, այնտեղ խլեց մակեդոնացիներից հարուստ Տիգրոն քաղաքը, այժմյան Բաղդադից վոչ հեռու, և ուղեց առանց դժվարության, հեշտությամբ գրավել նաև Հայոց աշխարհը և

Նստեցնել այնտեղ իր քաջ և խոհեմ յեղբայր Վաղարշակին:

Արշակ Մեծն յեղբորը բաժին տվեց իր ամբողջ Հայաստանը և հարևան մոտիկ յերկրները, վոր գնա տիրի նրանց, թագ դրեց նրա գլխին ու ասավ.


— Գնա, վերցրու այնքան, վորքան քո միտքն ու քո քաջությունը կկտրեն, վորովհետև քաջերի սահմանը նրանց գենքն եւ վորքան կը կտրի, այնքանին կը տիրի*):

Յերբ Վաղարշակը գալիս եր Հայաստան բազմաթիվ զորքերով, վոչվոք չհամարձակվեց դուրս գալ նրա գեմ և կովել: Նրան դիմավորեց Բագարատ մեծ իշխանն իր զորքով: Նա վուկի և արծաթ մատուցեց քաջ Արշակունուն, զարդարեց նրան մետաքսե զգեստներով և փակասով (ուսուցով), պսակեց նրան հին հայկազյան, հայրենի թագով, նստեցրեց նրան վուկեպատ և ականակուռ (ակներով զարդարված) գահի վրա և իր աղջիկը տվեց նրան կնության: Այս Բագարատին Վաղարշակը այդքան պատիվների և բարությունների համար կոչեց թագավորի յեղբայր և հայր Նրանից ծագեց Բագրատունի յերկելի նախարարությունը:

Վաղարշակը հրամայեց իր թագավորության բոլոր իշխաններին հավաքվել ընտիր քաջերով և ինքը յեկավ նստեց Արմավիր բլրի մոտ այդ անհամար զորքը վարժեցնելու: Այստեղ նա ստիպված մնաց շատ որեր, վորովհետև հայերը մոռացել ելին զինվորական կարգերը:

Այնուհետև նա այդ վարժված զորքերով հաղթեց այն բոլոր իշխաններին, վորոնք չեյլն կամենում թույլ տալ, վոր խաղաղություն հաստատվի Հայաստանում, ու սաստից վայրենի ազգերը, վորոնք նոր ելին մտել հուսիսային կողմերը, բնակվել ելին Մեծ Կովկասի ստորոտում, լայն հովտում և խոր-խոր ձորերում և պարապում ելին ավագակությամբ ու մարդասպանությամբ: Հետո նա մի քանի զակությամբ ու մարդասպանությամբ: Հետո նա այդիտեղ շինեց ամառանոցներ, վորսի տեղեր, տնկեց այդի-

*) «Սահմանք քաջաց զենն յուրյանց. վորքան հատանե, այնքան ունի»:



ներ և բուրաստաններ ու վերադարձավ Այրարատյան գաշտը: Այստեղ Վաղարշակը նշանակեց իերկրի վերակացուներ և ինքը գլխավոր իշխաններով զնաց դեպի Մծբին քաղաքը, վոր իր յեղայր Արշակ Մեծը տվել եր նրան իբրև մայրաքաղաք:

Մծբինում Վաղարշակը կամեցավ իմանալ, թե նվեր ելին իշխում հայաստանում իրենից առաջ, արդյոք քաջ մարդիկ են յեղել նրանք, թե վատ ու յերկշոտ: Բայց հայերի մեջ վոչ վոք նրան չեր կարող մի ճշմարիտ բան պատմել անցած ժամանակների մասին. շատ բան ել պատմվում եր սխալ և աղջատված: Այն ժամանակ նա ընտրեց մի գիտնական ասորի, Մար Արքաս Կատինային, վորը շատ լավ գիտեր և քաղդեական (բաբելական) և հունական լեզուներն ու գրերը, և ուղարկեց նրան իր յեղբոր մոտ մեծամեծ ընծաններով և այսպես գրեց իր յեղբորը:

«Յերկրի և ծովի թագավոր Արշակին, վոր պատկերով աստվածների նման ես, իսկ բախտով բոլոր թագավորներից բարձր, վորի միտքն այնքան լայն ե, վորքան յերկրի վրա փոված յերկինքը, Վաղարշակ կրտսեր յեղբորից և նիզակակցից, վոր քեզանից ե կարդված հայոց թագավոր: Վող ջություն քեզ և ամենայն հաղթություն:»

«Քեզանից յես պատվեր ստացա, վոր հոգ տանեմ քաշության և իմաստության գործերի մասին, և իերբեք մըտքցս չհանեցի քո ալդ խրատը, այլ ամեն ջանք գործ դրի, ինչքան իմ միտքն ու հասկացողությունը կարում եր: Յեկ այժմ՝ կարգի բերելով այս թագավորությունը քո խնամակալությամբ, մտքումս դրի իմանալ, թե նվեր են տիրել Հայոց աշխարհին ինձնից առաջ, վհրատեղից են այս նախարարությունները, վոր կան ալստեղ: Վորովհետեւ չի յերևում, վոր այստեղ վորեն կարգ յեղած լինի կամ վորեն մեհյանների պաշտամունք, հայտնի չե թե նվ ե այստեղի իշխաններից առաջինը և նվ ե վերջինը, վոչ մի որենք չի»

տեսնվում այստեղ, այլ ամեն ինչ խոռն ու խոռն ե և վայրենի:

«Ուստի աղաչում եմ քո տերությանդ, վոր հրամացես բաց անել արքունի դիվանդ այս իմ ուղարկած մարդու առջե, վոր դա գտնի քո յեղբոր և վորդու ցանկացածը և բերի շուտով ալստեղ ստույգ տեղեկություններ: Յես լավ գիտեմ, վոր այն մեր ուրախությունը, վոր պիտի զգանք մեր կամքը կատարված տեսնելուց, քեզ համար ել ուրախություն կլինի:

«Վող յեղին դու, վոր բնակվում ես աստվածների մեջ»:

Ստանալով այս նամակը Մար Արքաս Կատինայի ձեռքով՝ Արշակ Մեծն ուրախությամբ հրամայեց բաց անել նրա առջե արքունի դիվանը, վորտեղ պահված եյին հին թագավորների գործերի մասին մատյաններն ու զանազան պաշտոնական գրությունները, և շատ գոհ եր, վոր իր յեղբայրը, վորին ինքը իր թագավորության կեսն եր հանձնելու, այնքան խելոք ե և հեռատես Բոլոր մատյանները մի առ մի քննելով՝ Մար Արքասը վերջապես գտավ հունարեն մի մատյան, վոր գեռ Ալեքսանդր Մակեդոնացու հրամանով քաղցեացոց (բաբելացոց) լեզից թարգմանված համարեն այդ գրքի մեջ գրված եյին նախնի նահաներ հունարեն. այդ գրքի մեջ գրված եյին նախնի նահանական ասորին թագավորների և մեծամեծների պատմությունները: Գիտնական ասորին այս մեծ գրքից արտադրեց միները: Միայն այս; ինչ վոր վերաբերվում եր հայ աղգին, ու բերեց վաղարշակ թագավորի մոտ Մծբին քաղաքը: Վաղարշակն այդ գիրքը իր բոլոր գանձերի մեջ առաջին գտնան եր համարում և պատվիրեց մեծ զգուշությամբ պահել պահանջման առաջնական անդամը արձանի վրա լատում, իսկ մի մասն ել փորագրել տվեց արձանի վրա կանգնեցրեց քաղաքում, վոր ամենքը տեսնեն ու իմաստանան, թե ինչ ե անցել Հայաստանում իրենից առաջ:

Այս մատյանից Վաղարշակը կարողացավ վերջապես

բաժնունիք Իսկ վորսի ժամանակ բազեներ կը ելու և բաց
թողնելու իրավունքը թագավորը տվեց Հայունիներին:

Յերբ նախարարները հավաքվում եյին Վաղարշակի
մոտ ինչույքի, ամեն մեկը գիտեր իր տեղը Մեկը պիտի
նստեր թագավորին ավելի մոտիկ, մյուսը՝ ավելի հեռու:
Յերկրորդ բարձին սեղանին բազմում եր Մուրացան նա-
խարարը, այսինքն՝ «Մարաց տերը», վոր ծագում եր Աժ-
դահակի ցեղից. այդ ցեղը Տիգրան Յերվանդյանն եր Հայաս-
տան գաղթեցրել և բնակեցրել Մասիսի ստորոտում, Յե-
րասիմի ավին: Թագավորի պալատում կար մի ցուցակ, թե
վոր բարձը վոր իշխանական տան նախարարին եր տված:
Մի առանձին նախարար հացկերույթից առաջ շարում եր
այդ բարձերը սեղանի շուրջը, իսկ մի ուրիշը սպասավո-
րում եր Սպանդանոցի գլխավորն եր Սպանդունի իշխանը.
աս հոգս եր քաշում, վոր թագավորի ճաշին ամենաընտիր
միս մատուցվի: Իսկ համեղ գինիներ պատրաստողը Գնունի
իշխանն եր: Վաղարշակը շատ եր զվարճանում այս ան-
փան վրա, վորը կարծես նշանակելիս լիներ «գինի ունի»:

Կարգված եյին նույնպես ամառանոցներ պահող և
ամառը ձյուն բերող ու թագավորի համար զու խմիչքներ
պատրաստող առանձին իշխաններ:

Վաղարշակն այնքան եր հավատում Հայկի ցեղին, վոր
նրա միջից ընտրեց իր պալատի պահապան զորքը, վոր
կոչվում եր «Վոստան գունդ»: Այս պահապանները չորս
գունդ եյին կազմում, յուրաքանչյուրը տասնյակ հազար
զինված կտրիճներով: Մինույն Հայկի ցեղից նա ընտրեց
իր տան կանանցի վերակացուներ, վորոնք «ներքինի»
եյին: Նրանց գլխավորը կոչվում եր Հայր-մարդպետ. նա
յեր տան ամբողջ սարք ու կարգին, պահեստներին, գոմա-
նոցներին վերահասու լինում և շրջելով գավառից գավառ
թագավորական յեկամունքներին հսկում:

Այսպես կարգավորելով իր տունը, Վաղարշակը հետո

ծանոթանալ Հայկի և Արմենակի ժամանակից հաստաված
կարգերին ու կանոններին և այնուհետև ինքն ել սկսեց
կարգավորել իր թագավորությունը:

Անթիվ լշխաններ կային Հայոց աշխարհում՝ հսույց
մաշած: Նա տեղեկացավ, թե ինչ եյին արել այրենիքի
համար սրանց նախնիները և իրենք ել ինչ արժանավո-
րություններ ունեն, ու ամեն մեկին դրա համեմատ պաշ-
տոն և պատիվ տվեց արքունի պալատում, թե զորքի
կազմության և թե յերկրի կառավարության մեջ: Այդ պաշ-
տոնն ու պատիվը պիտի ժառանգաբար մնար իշխանական
ընտանիքի մեջ և սնցներ այդ տան մեծից փոքրին, սե-
րունդե սերունդ:

Վաղարշակը նախ սկսեց կարգավորել թագավորական
տունը:

Բագարասին, վորն այնպես մեծ պատվով և սիրով եր
իրեն առաջին անգամ ընդուներ, յերբ ինքը նոր եր Հայաս-
տան վոտք կոլում, նա ամենից ավելի պարզեց: Բագարատը
իրավունք ստացավ առանց մարգարիտների
և ակների կրտսեր յերեքտակեն վարսակալ կրելու գլխին՝
արքունիքում և թագավորական տան մեջ շրջելիս: Թագա-
գրության և հանգեսների ժամանակ նա պիտի զներ թա-
գավորի գլխին թագը, իսկ մի ուրիշ իշխան հագցնում եր
ձեռնոցները: Ամեն տեղ թագավորին հետևում եյին զինված
թիկնապահները, վորոնք ընտրված եյին քաջ և կտրիճ
մարդկանցնց, Հայկի վորդիներից մեկի, Խոռի սերունդից,
Խոռիսունիներից: Նրանց գլխավորը կոչվում եր «Մալ-
խաղ» (Մաղխաղ): Յերբ թագավորը մի տեղ եր զնում,
նրա առջեկից Արծրունիները տանում եյին վոսկե արծիվ-
ներ՝ յերկար ձողերի ծայրերին ամրացրած: Վորսի ժամա-
նակ ամեն ինչ կարպաղրում եր մի առանձին իշխան, վորի
Վարժ վորդին հետո մեծ անուն հանեց իր անորինակ
նետաձգությամբ: այդ պատճառով նրա ցեղը կոչվեց Վա-

զորքը կարգի բերեց։ Բոլոր ձիավորների գլուխ և ընդհանուր հրամանատար եր նշանակված թագարատ թագաղիք և ասպետ իշխանը։ Արան ասում եյին «սպարապետ»։ Իսկ հետեակ զորքի մեջ առաջին տեղը բռնում եր Մուրացան իշխանը, վորն իր ցեղից դուրս եր բերում բազմաթիվ հետեակ կովողներ։ Յերկրորդ, յերրորդ, չորրորդ և այլ կարգի հրամանատարներ ել նշանակեց թագավորն իր զորքի համար։ Իսկ թագավորության չորս կողմը թշնամիների հանկարծակի հարձակումներից պաշտպանելու համար նա պարտավորեցրեց սահմանների մոտ ապրող իշխաններին զորքերը միշտ պատրաստ պահել և հսկել սահմաններին։ Կազմյաններն ու Սիսակյանները ստացան իրենց հին կողմնակալության պաշտոնները, վոր դեռ Արամ նահապետն եր նրանց տվել, և պիտի նայելին առաջինը՝ հարավ-արևելյան, յերկրորդը՝ արևելյան սահմաններին։ Կային կողմնականներ նաև հյուսիս-արևելյանը, հյուսիս-արևելմուտքում, արևմուտքում և հարավում։

Արևմուտքի պաշտպանությունը հանձնված եր բարձրահասակ, խոժոռակազմ, կոպիտ, տափակաքիթ, խոր աչքեր և ահուելի հայացք ունեցող՝ Տորք իշխանին, վորն իր տգեղ և անճոռնի յերեսի համար կոչվում եր Սնդեղ։ Այս Տորքի ուժի մասին գարմանալի բաներ եյին պատմում։ Ասում եյին, իբր թե նա ձեռքով բռնում եր սարերի կողերից և այնտեղից, վորտեղ վոչ մի ձեղք չեր յերեւմ, պոկում եր ահագին քարեր, իր յեղունգներով կարատում տախտակների նման, տաշում և նույնպես իր յեղունգներով արծիթսեր և ամեն տեսակ պատկերներ եր վրան փորագրում։ Ասում եյին, իբր թե մի որ Պոնտոսի (Սև ծովի) ափին տեսել եր թշնամիների նավեր և մեն-մենակ հարձակվել նրանց վրա։ Նավերն իսկույն խուլս եյին տվեր, փախել բաց ծովը, բայց Տորքը յետեներից եր ընկել վոտով։ Յերբ ավելի խոր չեր կարողացել մտնել ջուրը, նա դուրս

եր յեկել ափը, ահազին ժայռեր պոկել և թշնամիների յետեկից նետել։ Քարերն ընկան նավերի մեջտեղ, ու քարերի ընկնելուց այնպիսի խոր պատովածքներ գոյացան ջրի մեջ, վոր նավերից շատերը ընկղմվեցին, խեղդվեցին այդ պատովածքների մեջ, իսկ մասցածներն ել շատ հեռու ցիր ու ցան յեղան բարձրացած ալիքներից։ Յեվ ուրիշ շատ և շատ սրա նման առասպելներ եյին պատմում այս Տորք Անդեղի մասին։

Յեկան Վաղարշակի մոտ Վահագնի ցեղից մարդիկ և խնձնակամ խնդրեցին, վոր իրավունք տա սպասավորեն մեհյաններում։ Թագավորը նրանց մեծապես պատվեց, նրանց հանձնեց քրմությունը և առաջին նախարարական տների շարքը կարգեց։ Միևնույն ժամանակ նա Արմավիրում շատ մեհյաններ կառուցեց և զրեց այնտեղ արեգակի, լուսնի և իր նախնիների արձանները։ Այսպես նա կարգի բերեց կրօնական գործերը։

Նա նորոգեց Շամիրամի շինած վան քաղաքը և հիմնեց շատ տեղ բազմամարդ քաղաքներ և զյուղեր և ամեն մի հպատակի իրավունք տվեց իր մոտ ազատ մտնելու գործով։ Դրա համար նա առանձին ժամեր նշանակեց, յերբ ամեն մեկին ընդունում եր, առանձին ժամեր ել՝ խորհուրդների, զվարճությունների, զբոսանքների համար։

Նա ուներ յերկու հիշեցնող մեկը բարին եր հիշեցնում, մյուսը՝ վրեժինդըություն։ Յերբ թագավորը բարկացած եր լինում և անիրավ հրամաններ եր արձակում, բարի հիշեցնողը պիտի արդարություն և ներողամտություն հիշեցներ։ Իսկ յերբ թագավորը մոռանում եր մեկին պատժել գործած չարության կամ հանցանքի համար, վրեժինդը ություն հիշեցնողը այդ բանը նրա միան եր ձգում։ Նա դատավորներ նշանակեց արքունի տանը, քաղաքներում և գյուղաքաղաքներում։ Նա հրամայեց, վոր քաղաքացիներին ավելի պատիվ տան, քան թե գյուղացիներին և վոր գյու-

դացիները պատվեն քաղաքացիներին, ինչպես իշխաններին, բայց վոր քաղաքացիներն ել չգոռողանան և շատ չըպարծենան ու ապացիների առջև, այլ յեղբայրաբար վարչեն նրանց հետ:

Ուրիշ շատ այս տեսակ կարգ ու կանոն մտցրեց Վաղարշակը Հայոց աշխարհում: Յեվ վորպեսզի թագավորի մահից հետո խոռվություններ չծագեն և վեճ չսկսվի ազգականների մեջ, թե ով պիտի արքայական գահը բարձրանա, նու կարգադրեց, վոր միայն անդրանիկ վորդին մնա թագավորի մոտ և իրավունք ունենա նրա հետ ապրելու միևնույն գավառում, մանավանդ Այրարատյան դաշտում, իսկ մնացած վորդիներն ու ազգականները պիտի բնակվելին ուրիշ նահանգներում, հատուկ նշանակված կալվածքներում, իբրև սովորական, հասարակ իշխաններ:

Շատ տարիներ ապրեց Վաղարշակը, Հայաստանի առաջին Արշակունի թագավորը: Հայոց աշխարհ մտնելիս նա ամեն ինչ խառնիխուռն գտավ, իսկ մեռնելիս՝ թողեց ամբողջ յերկիրը խաղաղության մեջ, ամեն մեկը գիտեր իր իրավունքներն ու պարտականությունները, հայտնի յեր մեծն ու պստիկը, և ամենքը գիտեյին՝ ինչն եր որինավոր և ինչն ապորինի:

Ուրիշ հարևան յերկրներումն ել նստած եյին զանազան Արշակունի թագավորներ, բայց Հայոց տերությունն այնքան ուժեղ եր և կարգավորված, վոր Վաղարշակը յերկրորդն եր հիշվում այդ բոլոր թագավորների մեջ և յերկրորդ տեղն եր բոնում Պարթևաց մեծ թագավորից հետո:

VIII ԱՐՏԱՇԵՍ Ա. ԱՇԽԱՐԴԱԿԱԼ

Շատ յերկրներում թագավոր դարձան Արշակունիները: Նրանց մեջ առաջինը պարսից արքան եր, իսկ յերկրորդը՝ հայոց: Բայց Վաղարշակ Ա. հայոց թագավորի թուրը, Արտաշեսը, վոր մի հպարտ և պատերազմասեր մարդ եր, չուզեց բավականանալ յերկրորդական գահով և կամեցավառաջինը լինել: Նա այնքան ուժեղացավ, վոր ավագությունը վերջապես խլեց պարսից թագավորներից, իր արքունիքը շինեց հենց Պարսից աշխարհում ու առանձին դրամ կարել տվեց իր պատկերով:

Պարսից թագավորն ստիպված եր նրա ձեռքի տակ ծառայել: Հայաստանում նա թագավոր նստեցրեց իր վորդի Տիգրանին, իսկ հուսիսային կուսակալությունը հանձնեց վրացոց Միհրդատ Բղեշին, վորին և տվեց կության իր Արտաշամա աղջիկը: Այսպես իր ուղածի պես եր կարգադրում Արտաշեսը թե հայոց և թե հարևան ազգերի գործերը:

Բայց նա փափագում եր նոր և նոր յերկրներ նվաճելու: Նա անհամար զորք հավաքեց արևելյան և հյուսիսային կողմերից ու այս բազմությամբ դիմեց գեպի արեմուտք: Ամեն տեղ, ուր նա իջևանում եր կամ վորտեղից անցնում, նա պատվիրում եր մարդագլուխ մի մի քարձեն, այդպիսով ահազին բլուրներ ելին կուտակվում: Յերբ նրա զինվորները գետից ջուր եյին խմում, գետը նվազում եր, ինչպես ձմեռվա ամիսներին, և վերկից հո-

առղ ջրերը չեյին կարողանում պլակասը լցնել։ Կովի ժամանակ նրա զորքերի նետերի խտությունից արեգակը ծածկվում-իսավարում եր, և պայծառ կեսորը մութ դիշել եր դառնում։


Ու այնքան շատ եյին նրա զինվորները, վոր անկարելի յեր լինում նրանց մեկ-մեկ համարել, այլ միայն չափելով եյին իմանում նրանց թիվը։

Ահա այսպիսի բազմությամբ Արտաշեսն անցավ արեմուտք և հեղեղեց ամբողջ Փոքր-Ասիան։ Ամեն տեղ, ուր նա գտնում եր պղնձաձուց վոսկեզոծ կուռքեր, հրամայում եր վերջնել և տանել Հայաստան։ Այս կուռքերը դրվեցին Արմավիրում։

Այսպես նա հասավ մինչև այն ծովը, վորի մյուս ափին Հունաստանն եր։ Նա անթիվ նավերով լցրեց ծովը և անցավ մյուս կողմը, վորովհետև մտադիր եր ամբողջ արեմուտքն իրեն ծառայեցներ։ Վոչ վոք չեր կարողանում նրա զորությանն ընդդիմագրել։ Հարուստ քաղաքներ, շեն ավաններ նա ավերեց և այստեղից ել բազմաթիվ կուռքեր ուղարկեց Հայաստան։ Նրանք դրվեցին Յեփրատի վերնագավառի նվիրական մեհյաններում։ Բայց հայտնի չե, թե ինչու—արդյոք թշնամու վոսկուց շացած, թե թագավորի գոռողամտությունից զզված—նրա զորքերը վոտքի յելան նրա գեմ և սկսեցին իրար կոտորել։ Արտաշեսն ստիպված եր փախչել և ճանապարհին սպանվեց իր զինվորներից։ Մեռնելիս նա հուսախափ բացականչեց։

— Ավաղ փառացս անցավորի (Ավաղ այս անցավոր կյանքի փառքին)։

Յեվ արտասպեց։



IX

ՅԵՐՎԱՆԴ ԱՐՇԱԿՈՒՆԻ ՅԵՎ ՍՄԲԱՏ ԲՅՈՒՐԱՏՅԱՆ

Շատ թագավորներ նստեցին Հայաստանում վաղարշակից հետո Արշակունի տնից, և Բագրատունի նախարարները միշտ հավատարիմ ծառայում եյին նրանց։ Բագրատունիներն եյին մեծացնում և կրթում թագավորական տղաներին և հետո նրանցից մեծին հոր մահից հետո գահ նստեցնում և գլխին Արշակունյաց ժառանգական թագը դնում։

Շատ մեծամեծ մարդիկ դուրս յեկան այս իշխանական տնից և փառավորվեցին վոչ միայն հայրենի աշխարհում, այլ և Հայաստանից դուրս։ Բայց նրանց մեջ վոչ վոք այնպես անուն չհանեց, ինչպես Սմբատը, Բյուրատ Բագրատունու վորդին։

Նա քաջ եր և անհաղթելի. ժամանակակիցների մեջ վոչ վոք չուներ նրա նման աջողություն պատերազմներում։ Քաջության համեմատ եր և նրա մեծ հասակն ու ամուր կազմվածքը։ Մինչև խորին ծերություն նա մնաց արագաշարժ և աշխույժ և նույնիսկ ալեսոր մազերով զարդարված տարիքում պահպանեց իր յերիտասարդական գեղեցկությունը։ Աչքի մեջ ունեցած արյունի բիծը ավելի եր գեղեցկացնում նրան։ Նա՝ չնայած մարմնի ուժին և ամրության, ամեն բանի մեջ զգույշ եր ու հեռատես և իր առաքինություններով ամենքի սիրտն ու հոգին եր շահում։

Սմբատ Բյուրատյանն իր ամբողջ կյանքը զոհեց գահ

բարձրացնելու Սանատրուկ թագավորի վորդի մանուկ Արտաշեսին, վորը միակ որինական ժառանգն եր հորից հետո։ Վոչ կաշառքը, վոչ մեծամեծ պատիմակների խոստումը, վոչ ել փառքն ոտար աշխարհում նրան չգրավեցին, և նա հավատարիմ մնաց իր պարտքին։

Սանատրուկին իր ծծով մեծացրել եր Սմբատի հորաքույր Սանուար, վորը Արծրունի իշխանի ամուսինն եր։ Պատմում են, վոր մի ձմեռային որ, յերե յերեխայի մայրը՝ Ողան և ծծմայրը՝ Սանուն անցնում եյին Կորդվաց լեռներով, սաստիկ բուք բարձրացավ, մրրիկը ցրեց ամենքին և այլ ևս մեկը մյուսին չեր կարողանում գտնել։ Սանուար յերեխան գրկած՝ յերեք որ յերեք գիշեր մնաց ձյունի յերեխային իր կաթով կերակրելով և մարմնի տատակ, յերեխային իր կաթով կերակրելով մի ինչ վոր հրաքությամբ տաքացնելով։ Աստվածները մի ինչ վոր հրաշալի կենդանի ուղարկեցին, վորը պահում պահպանում եր նրանց։ Շատերը կարծում են, վոր այդ կենդանին սպիտակ շուն և յեղել, վորին իրենց հետ եյին վերցրել կորածներին վորոնող մարդիկ, և նա յե պատահել ու գտել մանուկին և գայակին։ Այդ բանից հետո յերեխան կոչվեց Սանատրուկ, այսինքն՝ Սանուտի տուրք։ Այս Սանատրուկը հետո Հայոց թագավոր դարձավ։

Իր թագավորության վերջին տարիներում նա մեծ վստահություն եր ցույց տալիս մի մարդու, վորը մորով նույնպես Արշակունի եր։ Սրա անունն եր Յերվանդ։ Նրա մայրը՝ խոշոր մարմնով և խոշոր գեմքով ինքնակամ մի կին եր։ Իշխաններից վոչ վոք սիրտ չարավ նրան կին առնելու։ Նա այն ժամանակ մի անհայտ, հասարակ մարդ ուղեց և ծնեց նրանից լերկու մանուկ. մեկի անունը դրեց Յերվանդ, մյուսինը՝ Յերվազ։ Յերվանդը մեծանալով դառավ մի սրտոտ, քաջ և հաղթանդամ տղամարդ և սիրելի լեղավ Սանատրուկին, այնպես վոր Հայոց բոլոր նախարարների մեջ նա առաջին տեղը բռնեց։

Իր խոնարհությամբ և առատաձեռնությամբ Յերվանդը

ամենքին իր կողմն եր գրավում: Յերբ Սանատրուկը մեռավազ վրասի ժամանակ մի նետից՝ հայտնի չե թե ինչպես վիրավորվելով, — Յերվանդն ոգտվեց յերկրում իշխող շփոթությունից և իր կողմանակիցների ոգնությամբ թագավոր դարձավ: Բայց Բագրատունիների ազգից վոչ վոք չցանկացավ նրա գլխին թագ դնել և այդպիսով նրան որինական թագավոր ճանաչել:

Թագավոր դառնալուց հետո կասկած ընկավ Յերվանդի սրտում՝ չինի թե Սանատրուկի վորդիքն ուղենան հայրական գաճին տիրանալ, և վտանգը կանխելու համար նա կոտորել տվեց ամենքին: Միայն մի տղա, վորի անունն եր Արտածես, ազատվեց այդ կոտորածից: Ծծմայրը նրան փախցրեց գետի արեելք և Կապուտան (Ուրմիո) լճի մոտերքում թաք կենալով՝ մարդ ուղարկեց նրա «դայակ», այսինքն դաստիարակ Սմբատ Բյուրատյանի մոտ յեղելությունն իմաց տալու: Սմբատն այդ ժամանակ իր տոհմական կալվածքներում եր, ծորոխ գետի*): հովտում, Սպեր գավառում, Սմբատավան գյուղում: Հենց վոր լսեց սարսափելի բոթը, վոր Սանատրուկը մեռել է, իսկ նրա վորդիք Յերվանդի հրամանով կոտորվել են, նա իսկույն իր յերկու աղջկներին, Սմբատանուշին և Սմբատուհուն տարավ նստեցրեց Բայբերդ քաղաքը և այդտեղ ընտիր պահապաններ դրեց, վոր ամրոցը պաշտամանեն, իսկ ինքը իր վնոջ հետ և սակագաթիվ մարդկանցով շտապեց մանուկ Արտաշեսին գտնելու: Յերվանդն իմացավ նրա գնալը և յետեկց մարդիկ ուղարկեց, վոր բռնեն: Այդ պատճառով Սմբատը՝ գտնելով Արտաշեսին, ստիպված եր յերկար ժամանակ ծպտված, զգեստները փոխած լեռներում ու դաշտերում վոտով թափառել, իջևանել մանուկի հետ մար հովիզների վրաններում և իջևաններում, մինչև վոր հարմար ժամանակ գտավ և փախավ պարսից թագավորի մոտ:

*) Բաթումիի մոտ թափվում եւ Սև ծովը:

Սմբատի քաջության համբավը վաղուց արդեն հասել եր պարսից արքայի ականջը, և նա մեծ պատիմսեր տվեց հայ նախարարին իր զորավարների հետ հավասար, իսկ Արտաշեսին, վորը Արշակունի յեր, ուրեմն և իրեն հեռավոր աղդական, կրթեց դաստիարակեց իր վորդիների հետ:

Յերվանդը շատ եր մտածում այն բանի մասին, թե ինչպիսի պատուհաս ե մեծանում, պահվում իր համար պարսից արքունիքում, և անհանգստությունից չեր կարողանում ընել: Նույնիսկ յեթե քնում ել եր, միշտ սարսափելի յերազներ եր տեսնում: Յեվ ահա նա դեսպաններ ուղարկում պարսից թագավորի մոտ և այսպես ե ասում:

— Արյունակից և հարազատ իմ. ինչու յես իմ և իմ թագավորության գեմ քո տանը մեծացնում մար Արտաշեսին, ինչու յես ականց զնում ավագակ Սմբատի խոսքերին, ինչու յես լսում նրան և հավատում իրը թե դա Սանատրուկի վորդի յե, Արշակունի և քեզ արքունակից ու հարազատ: Նա Սանատրուկի վորդի չե, այլ Սմբատը խաբում ե, մար հովիզների ինչ վոր տղային աշխատում և Արշակունի դարձնել և սուտ-սուտ բաներ ե հնարում:

Նույնպես և շատ անգամ Յերվանդը դեսպաններ ե ուղարկում Սմբատի մոտ և ասում:

— Ի՞նչու յես դու այդքան աշխատում: Ծծմայրը քեզ խաբել ե, ինչու յես իմ գեմ մի մար տղա մեծացնում:

Բայց պարսից թագավորը վոչինչ չեր պատասխանում, իսկ Սմբատն այնպիսի անախորժ, ծանը ու կծու խոսքերով եր յետ զարձնում իրեն մոտ յեկողներին, վոր Յերվանդը վերջը սաստիկ զալրացած ուղեց վրեժը լուծել նրա աղջկներից: Նա զորք և ուղարկում Սպեր գավառը, պաշարում ե Բայբերդ ամրոցը, կոտորում Սմբատի թողածքաջ պահապաններին, զերի լի վերցնում Սմբատանուշին և Սմբատուհուն և տանում փակում ե նրանց Անի: ամրոցում (Յեփրատի ափին), թեև զգուշանում ե անպատիկ վարփելու նրանց հետ:

Քանի դեռ մանուկ Արտաշեսն ապրում եր պարսից արքունիքում, Յերվանդը միշտ յերկյուղի մեջ եր, վոր մի որ նա մեծանալով կլոլի իրենից հայրական գահը։ Այս վտանգից ազատվելու համար, նա հայոց Միջազետքը տվեց հռոմայեցիներին և սկսեց նրանց մեծ հարկ վճարել, վոր վտանգի ժամանակ նըանք իրան ողնեն։

Յերվանդը վախենում եր նախարարներից, վախենում եր և ժողովրդից։ Ուստի մտածեց շինել իր համար մի ամուր քաղաք, մանավանդ վոր Յերասխը հեռացել եր Արմավիրի տակից և ձմեռվա ցրտերին հուսիսային սառը քամիներից քաղաքում բոլոր ազրուները սառչում ելին ու բնակիչները վոչ մի տեղից չելին կարողանում բավականափ ջուր գտնել։ Թագալորը մի քարաբլուր ընտրեց հին քաղաքից մի փոքր հեռու, դեպի արևմուտք, Յերասխի ափին, այստեղ, վորտեղ դիմացի կողմից թափվում ե Ախուրյանը, պատեց այդ բլուրը ամուր պարիսպներով և այստեղ տեղափոխեց իր արքունիքը թագավորական բոլոր գանձերով և զարդերով։ Քաղաքի ներսում նա փորել տվեց խոր-խոր ջրհորներ, վորոնց հատակը գետի հատակին հավասար եր։ Գետի ջուրը, գետնի միջից ծծվելով և զավելով հավաքվում եր այդ ջրհորներում։ Իսկ միջնարերդը նա ամրացրեց բարձր պարիսպով և սպարսակ մեջ պղնձե դռներ շինեց, իսկ ներքեցից վերև բարձրանալու համար կառուցեց յերկաթե սանդուխտներ։ Այդ սանդուխտների մեջ ծածուկ վորոգայթներ կային, վոր վոչ մի դավադիր շկարողանա ծածուկ մտնել միջնարերդը, վորտեղ ապրում եր թագավորը։ Այդ սանդուխտները յերկու տակ ելին. մեկը ցերեկվա՝ սպասավորների և բոլոր ցերեկով մտնող-յեխողների համար, իսկ մյուսը՝ գիշերվա, վորտեղ դավադիրներն ընկնում ելին վորոգայթի մեջ ու բռնվում։

Այս ամուր քաղաքը Յերվանդն իր անունով կոչեց Յերվանդաւա:

Բայց նա չուզեց տեղափոխել այստեղ Արմավիրի կուռքերը, վորովհետև վախենում եր՝ չինի թե շատ ժողովուրդ հավաքվի զոհաբերությունների համար իր նոր քաղաքը և ինքն անկարող լինի զգուշությամբ զերծ պահել իր պալատը զավադիրներից։ Յերվանդաշատից մոտ 40 ասպարեզ հեռու, դեպի հյուսիս նա մի փոքր քաղաք շինեց Ախուրյան գետի վրա և այնտեղ տեղափոխեց բոլոր բագինները. այդ պատճառով քաղաքը կոչվեց Բագարան։ Այստեղ նա շինեց սեհյաններ ու քրմապետ նշանակեց իր յեղբայր Յերվագին։

Յերասխի հյուսիսային ափին նա մեծ անտառ աղնեկել տվեց ու պատով շրջապատեց։ Ներսը նա լցրեց վալրի այծյամներ, յեղնիկներ, յեղճերուներ, վալրի եշեր և վարագներ, վորոնք այստեղ բազմանում, շատանում ելին։ Այս անտառը կոչվեց Ծննդոց անտառ։ Այստեղ Յերվանդը զվարճանում եր վորտորդությամբ։

Բայց բոլոր շինությունների մեջ ամենագեղեցիկը և չընազը Յերվանդակերտն եր։ Այս գաստակերտը նա շինեց Յերասխից գետի հյուսիս, լայն հովտի մեջ։ Մեջտեղում նա կառուցեց պայծառ շինություններ, վորոնք արևի լույսով վալլում ելին աչքի բբի պես, և լցրեց այս շինությունները բնակիչներով։ Բնակության շուրջը տարածվում էլին ծաղկանոցներ և բուրաստաններ, ինչպես բբի շուրջն է աչքի բոլորակը։ Հետո գալիս ելին բազմաթիվ այգիներ՝ նման կոպերի խիտ և սիրուն գծերին, իսկ հյուսիսային կողմից ձգվում եր կամարած բարձրություն, գեղեցիկ կույսի բարձր, հոնքի պես։ Հարավից տարածվում ելին հարթ դաշտեր՝ պարզ ու գեղեցիկ ծնոտի պես, իսկ գետի յերկու ափերը նմանում ելին երկու շրթունքների։ Այս հրաշալի աչքը կարծես անթարթ հայցքը հառե, եր թագավորանիստ Յերվանդաշատին ու սքանչանում եր։

Յերվանդակերտը ճշմարիտ վոր թագավորավայել մի պատակերտ եր։

Զուր հո չելին ասում, թե Յերվանդը կախարդ է:

Ասում եյին, իբր թե նրա չար աչքի նաև վածքին վոչ վոք չեր դիմանում: Մերձավորները և սպասավորներ սովորություն ունեյին, ամեն առավոտ լուսանալուն պես պինդ քարեր եյին բոնում Յերվանդի առջև, և նրա չար նայվածքից քարերը ճաքում եյին:

Բայց վոչ իր ճարտար շինություններով, վոչ ել իր հմայություններով Յերվանդը չկարողացավ գրավել նախարարների և ժողովրդի սերը: Յեվ նրա սրտի մեջ դողընկավ, յերբ լսեց, վոր Սմբատ Բյուրատյանը բերում ե Արտաշեսին Սանատրուկի գահի վրա բազմեցնելու:

Յերբ Արտաշեսը մեծացավ և նրա դայակ Սմբատը մեծ անուն հանեց Պարթևաց աշխարհում իր քաջագործություններով, պարսիկ նախարարները խնդրեցին իրենց թագավորին, վոր պարզեատրի նրան և տա այն, ինչ վոր նա կխնդրի:

— Իմացեք, ինչ ե կամենում այդ քաջ մարդը, — պատասխանեց թագավորը:

Յեվ նրանք ասացին.

— Քո անմահ բարերարությունդ, Սմբատն ուրիշ բան չի ուզում, բայց թե Սանատրուկի վորդի Արտաշեսին, թագավորությունից զրկված քո արյունակցին և հարազատին, վերադարձն հայրական գահը:

Սրբայից արքան համաձայնվեց և տվեց Սմբատին իր զորքի մի մասը, վոր տանի, նստեցնի Արտաշեսին Սանատրուկի գահի վրա:

Սմբատը շտապով առաջ գնաց: Յերվանդը Ուտիացոց յերկրութիւն եր: Յերվանդը յերբ իմացավ, վոր Սմբատը գաւլիս ե պարսից զորքերով, թողեց այնտեղ իր նախարարներից շատերին այդ սահմանները պահելու, իսկ ինքը շտապեց իր մայրաքաղաքը և հավաքեց զորքեր հայերից, վրացիներից և հարեան ազգերից՝ վորին աղաչանքով, վորին

պարգևներով: Գարնան որեր եյին, սրա համար ըոլոր զորքերն արագ ժողովվեցին: Յեկել եր նաև Արգամ Մուրացան հշխանը, վորին Յերվանդը վերադրել եր յերկրորդական գահը, վոր զրանից առաջ հայ թագավորները խլել եյին Աժդահակի ցեղից: Աս բերել եր իր հետ բագմաթիվ հետեակ զինվորներ: Վոչ միայն սրան, այլ և բոլոր նախարարներին և զորքերին Յերվանդը առատ-առատ պարգևներ եր բաժանում:

Յերբ Սմբատն Արտաշեսի հետ հասավ Ուտիացոց սահմաններին, այն կողմի զորքերը անցւն նրա կողմը զորքերին հետեւցին և նախարարները: Աւա լուրը շփոթություն առաջացրեց Յերվանդի կողմակիցների մեջ: Նրանք ել սկսեցին մտածել Յերվանդից բաժանվել, մանավանդ վոր տեսնում եյին, վոր հոգմեական ոգնական զորքերը չեն գալիս: Իսկ Յերվանդը սրան նրան գանձեր և պատիվներ եր բախչում, բայց սրանով միայն ավելի ու ավելի ատելի յեր գառնում: Բոլորն ել լավ գիտեյին, վոր նա պարգևներ ե տալիս վոչ թե առատաձեռն լինելուց, այլ Սմբատի յերկուղից, և այնքան չեյին սիրում նրան շատ ստացողները, վորքան ատում եյին նրան թիշ ստացողները:

Գեղամա ծովի ափով Սմբատը յեկավ Արագած սարի յետեր: Նա չեր վախենում Յերվանդի զորքերի շատությունից, նա յերկուղ եր կրում միայն Մուրացան Արգամ հշխանից, վոր մի քաջ տղամարդ եր և բազմաթիվ տիգավորներ: (Կարձ նիզակնեռով զինված մարդիկ) ուներ:

Արտաշեսը ծածուկ պատգամավորներ ուղարկեց Արգամ նախարարին և յերգեց, վոր կթողնի նրան այն ամեն պատիվները, վոր ստացել եր նա Յերվանդից, նույնիսկ ավելի կըարձրացնի, միայն թե նա թողնի Յերվանդին մենակ և հեռանա:

Յերեք հարյուր ասպարեղ Յերվանդաշատից հետո գեղի հուսիս, Ախուրյան գետի ափին, Արտաշեսն ու

Յերվանդն իրար պատահեցին։ Սմբատը հնչեցրեց պղնձե
փողերը և առաջ ընկալի, հարձակվեց Յերվանդի զորքերի
վրա, գորպես մի զայրացած արծիվ կաքամերի խմբին։
Արդամն իր բազմաթիվ հետևակներով մի կողմ քաշվեց,
Յերվանդի աջ և ձախ թևերից հայ նախարարներն ել անցան
Արտաշեսի կողմը և խառնվեցին նրա մարդկանց հետ։ Վրացիք
նահանջեցին։ Միջագետքի զորքերը սարսափելի ջարդ կրե-
ցին, միայն Տավրոսի քաջերը դեռ պաշտպանվում եին։
Նրանք յերդվել ելին և խոստացել ելին Յերվանդին իրենց
կլանքը չխնայել և Արտաշեսին սպանել։ Նրանք թշնամի-
ների շարքերը ճղելով՝ միշտ գեպի առաջ ելին գնում, գեպի
Արտաշեսի կանգնած տեղը, յերբ մեջ ընկալ Արտաշեսի ծըծ-
մոր գորդին՝ Գիսակը հետևակ, նա նրանց առաջը կարեց, սպա-
նեց նրանց, բայց կովի մեջ թշնամու սրից նրա դեմքի կեսը
վայր բերվեց, և նա մեռավ, բայց փրկեց իր կաթնեղբորը։

Այս ժամանակ Յերվանդի ամբողջ զորքն սկսեց փախ-
չել իսկ Յերվանդը ձի հեծած շտապեց իր մայրաքաղաքը՝
Նա ձին փոխում եր իշխանից իշխան, վոր տեղավորել եր իր
բանակից մինչև իր քաղաքը, Բայց Սմբատը չնայելով
գիշերվա ժամին՝ հալածում եր նրան սակավաթիվ կարիճ-
ներով մինչև Յերվանդաշատի դուռը։

Մարաց զորքերն այդ գիշեր մնացին Յերվանդի զորքի
լքած տեղում և բանակեցին դիակների վրա, իսկ Արտա-
շեսը իշխանեց Յերվանդի՝ կաշով և կտավով պատած վրա-
նում և այնտեղ անցկացրեց գիշերը։ Յեկ յերբ լուսացավ,
Արտաշեսը չուզեց անարդել Յերվանդին պաշտպանած քա-
ջերին և ազնվությամբ, իշխանաբար հրամայեց նրանց դիակ-
ներն ել թաղել իր ընկած զինվորների հետ, վորպեսզի
վայրեսի գաղաներն ու թուշունները չհո ոտեն նրանց։
Այս հովիտը, վորտեղ նա բանակեց դիակների վրա, նա կոչեց
Մարաց Մարգ, իսկ կովի տեղը. Յերվանդավան, այսինքն՝
մի տեղ, վորտեղից ինքը վանել՝ փախցրել և Յերվանդին։



Յերվանդը փախչում է պատմազմի դաշտին

Այս այսպես անելով՝ Արտաշեսը գնաց դեպի Յեղ-
վանդի քաղաքը։ Կեսորից առաջ եր, վոր նա հասավ դաս-
տակերտին։ Նա հրամայեց իր զորքերին գոչել «Մար ա-
մաղ», այսինքն՝ «Մարը լեկավ», հիշեցնելով այն վիրա-
փորական խոսքը, վոր Յերվանդն ուղարկում եր պարսից
թագավորին և Սմբատին՝ նրան մար հովվի վորդի անվա-
նելով։ Այսուհետև գաստակերտը սկսեց Մարմես կոչվել,
վորովհետև Արտաշեսը կամենում եր, վոր Յերվանդի
անունը վերցվի այդ տեղի վրայից։

Մինչև Արտաշեսի գալը Սմբատն իր փոքրաթիվ գնդով
պահում եր քաղաքի գուռը։ Յերբ ամբողջ զորքը հասավ
և հարձակում գործեց ամրողի վրա, ամրոցի մարդիկ անձ-
նատուր յեղան և դուռը բաց արին։ Զինվորներից մեկը
վագելով մտավ պարատը, վաղրով (թրով) գարկեց Յերվանդի
գլխին ու նրա ուղեղը ցըվեց տան հատակին։ Այսպես
վախճանվեց Յերվանդը, Սանատոռովի վորդոց կոտորողը։
Բայց Արտաշեսը թույլ չտվեց անպատճել նրա դիակը.
Նա հիշում եր, վոր Յերվանդն ել Արշակունի արյունից եր,
և հրամայեց թաղել նրա դիակը և վրան արձան կանգ-
նեցնել։

Յերվանդի մահից հետո Սմբատը մտավ թագավորա-
կան գանձարանը, պարտեց այստեղ ու գտավ Սանատոռուկի
ծանոթ թագը, բերեց զրեց Արտաշեսի գլխին և թագավոր
կարգեց նրան Հայաստանի վրա։

Այդ որը ամենայերջանիկ որն եր Սմբատ Բյուրա-
տյանի համար։

X

ԱՐՏԱՇԵՍ Բ. ՅԵՎ ԱՐՏԱՎԱԶԴԴԻ

Արտաշեսը տիրացավ նորից իր հայրական գահին և
չգիտեր, թե ինչպես իր յերախտագիտությունը ցույց
տա այն ամենքին, ովքեր իրեն ոգնել եյին արդ դժվար և
վտանգավոր գործի մեջ։ Նա մեծ-մեծ պարզեներ տվեց
պարսից զինվորներին, վորոնք քանի-քանի անգամ իրենց
արլունը թափել եյին նրա համար, և սրտանց շնորհակա-
լություն հայտնելով նրանց՝ ճանապարհ դրեց իրենց հայ-
րենիքը։ Մուրացան իշխանին՝ քաջ և պատվական Արգամին,
նա վոչ միայն, ինչպես խոստացել եր, կրկին յերկրոր-
դական գահը տվեց, այլ և նվիրեց հակնթակապ պատկ,
զինդեր (ողեր) յերկու ականջներին և կարմիր կոշիկ մի
վոտին։ Արգամն իրավունք ստացավ թագավորի սեղանին
վոսկի գգալով և պատառաքաղով ուտելու և վոսկեղեն
գավաթով խմելու։

Զմուացավ մանուկ թագավորը և իր անձնվեր դա-
յակ Սմբատին։ Նա նույն պատվերները տվեց նրան, ինչ
վոր տվել եր Արգամին, բացի յերկու ականջի գնդերից և
կարմիր կոշիկներից, բայց դրա փոխարեն նրան կարգեց
բոլոր նախարարներից բարձր։ Արտաշեսը վոչ միայն իին,
հայրենական թագակապ ասպետությունն ու արևմտյան
զորքի իշխանությունը հանձնեց Սմբատին, այլ և հրամա-
նատար նշանակեց նրան բոլոր գործակալների վրա և կար-
գադրիչ՝ ամբողջ արքունի տան։ Արտաշես թագավորը
գշտացած եր, վոր մեռել եր իր ստընտվի վորդին՝ Գիսակը։

Այն ժամանակ նա բարձրացրեց նրա վորդի Ներսեսին։ Նա նախարարական պատիվ տվեց Ներսեսին ու նրա սերնդին և կոչեց այս նոր նախարարական ազգը Դիմաքսյան, այսինքն՝ «Դեմք-կեսյան», ի հիշատակ Գիսակի, վորն իր կաթնեղբայր Արտաշեսին պաշտպանելիս՝ կովի մեջ թշնամու որից կորցրել եր գեմքի կեսը։

Ամենքից շատ Արտաշեսը պարտական եր պարսից թագավորին, վոր հարազատ նոր պես իրեն պատսպարել և ամենազլխավոր ոժանդակությունն եր ցույց տվել։ Նա հրամայեց Սմբատին գնալ Բագարան, սպանել այնտեղ քրմապետ Յերվագին և բերել նրա գանձերը։ Սմբատը գնաց դեպի հյուսիս, բռնեց Յերվագին, մի ծանր յերկանաքար հրամայեց կապել նրա վզից և ձգել նրան Ախուրյան գետի վոլորտների մեջ, իսկ նրա տեղ քրմապետ կարգեց Արտաշեսի մերձավորներից մեկին, վոր մի ժամանակ մի ինչ վոր յերազահան մողի աշակերտ եր յեղած և այդ պատճառով Մոգազտե, այսինքն՝ «Մոգ պաշտող» եր կոչվում։ Յերվագի հինգ հարյուր ծառաներին և բոլոր գանձերը, նույնպես և մեհյանների ամենաընտիր ակնեղենն ու վոսկեղենը Սմբատն ավար վերցրեց ու բերեց Արտաշեսի մոտ։ Այս հարստություններից թագավորը Սմբատին նվիրեց հինգ հարյուր ծառաները, իսկ բերած գանձերի վրա ավելացրեց նաև իր գանձարանից բազմաթիվ թանկագին իրեր և հանձնեց Սմբատին, վոր տանի իր կողմից ընծա իր հայր և ոգնական պարսից թագավորին։

Սմբատ Բյուրատյանը Յերվանդաշատից դիմեց դեպի Պարսկաստան։

Նա անցավ Մասիս լեռան մյուս կողմը և այնտեղ, Արածանի գետի ափին, ակունքից վոչ հեռու, Նպատ լեռան ստորոտում, հիմնեց մի ավան։ Այդ ավանում ընակեցրեց իրեն ընծայած՝ Յերվագի ծառաներին, այդ պատճառով այդ ավանն ել նրանց հին ընակավայրի անունով կոչվեց Բա-

գարան։ Այնուհետև Սմբատը, իբրև ընծայատար, շտապեց պարսից թագավորի մոտ, հանգիստ լինելով, վոր իր բացակայության միջոցին վոչ մի թշնամի չի հարձակվի Հայաստանի վրա։ Բայց այդպես չեղափ. հենց այդ ժամանակ յեկան հոռնեկան կայսեր հարկահանները և ահազին զորքով կանգնեցին հայոց սահմանների մոտ։ Նրանք պահանջեցին՝ Արտաշեսից Յերվանդի վճարած տարեկան հարկը և սպառնում եին ներս խուժել Հայաստան, տակն ու վրա անել քանդել ամբողջ աշխարհը։ Իսկ սպարապետ Սմբատը հեռու յեր։ Արտաշեսը գերագասեց համոզել հոռմայեցին երին յետ կենալ իրենց մտադրությունից, հարկն իսկուժն ուղարկեց նրանց և այսպիսով հաշտություն կնքեց նրանց հետ։

Արտաշեսը չուզեց բնակվել Յերվանդի շինած քաղաքում և գնաց այնտեղ, վորտեղ խառնվում են Յերասին ու Մեծամորը։ Այդտեղ մի բլուր կար, վոր նա շատ հավանեց. ահա այդ բլուրի վրա նա շինեց մի նոր քաղաք, վոր իր անունով անվանեց Արտաշատ։ Յերասին ինքը կարծես նրան ոգնում եր, բերելով իր հետ մայրի փայտ, և առանց դժվարության ու կարճ ժամանակում շինվեց այդ քաղաքը։ Քաղաքի մեջ Արտաշեսը կառուցեց մի մեհյան և հրամայեց Բագարանից այդտեղ տեղափոխել բոլոր բազիններն ու հայրենի կուռքերը։ Այսաեղ փոխադրեց նա Յերվանդաշատից բոլոր զարդարանքները, թե այն, վոր տարգած եյին Արմավիրից, և թե այն, վոր ինքը Յերվանդն եր շինել տվել։ Ինքն ել իր հերթին շատ հոյակապ շինություններով ճոխացրեց արքայանիստը։ Յեկ Արտաշատը Հայաստանի քաղաքների մեջ ամենազեղեցիկ և ամենահարուստ քաղաքը դառնավ, վորովհետև թագավորը Յերվանդաշատից բերեց և ընակեցրեց այստեղ նաև այն արհեստավոր և զանառական հրեաներին, վորոնց Յերվանդը Սմբագիրից տարել եր իր քաղաքը։ Այս հրեաները շատ տարիներ առաջ գերի եյին

քերպած իրենց հայրենիքից, Պաղեստինից և բնակեցրած
ելին Արմավիրում:

Արտաշատը դեռ կառուցվում եր, յերբ հանկարծ Կով-
կասի լեռնաբնակ ալանները՝ միացնելով իրենց հետ բոլոր
լեռնականներին և վրացիներից շատերին, մեծ ամբոխով
ասպատակեցին Հայաստան ու տարածվեցին մեր յերկրում:
Արտաշեսն իսկույն հավաքեց բազմաթիվ զորք և գնաց
նրանց դեմ: Ալանները չկարողացան դիմանալ հայ քա-
ջերի հարձակմանը և յետ քաշվեցին, անցան կուր գետի
մյուս ափը և այնտեղ բանակ դրին, իսկ նրանց դիմաց
գետի աջ (հարավային) ափին Արտաշեսը բանակեց իր
զորքով:

Հայերի ձեռքը գերի յեր ընկել ալանաց արքայի վոր-
դին: Ալանաց արքան խաղաղություն եր առաջարկում
Արտաշեսին, խոստանում եր տալ ինչ վոր կինդրի, ա-
սում եր թե յերդումով հավիտենական դաշինք կհաս-
տատի, վորպեսզի յերբեք ալանների կտրիճները չասպա-
տակեն և չավերեն Հայոց աշխարհը, միայն թե Արտա-
շեսն ազատ արձակի արքայազումին: Բայց Արտաշեսն
այնքան եր զայրացած, վոր վոչ մի պայմանով չեր ուզում
բաց թողնել գերյալին, և սպառնում եր կամ սպանել տալ
պատանուն, կամ իրեւ ստրուկ պահել նրան իր մոտ և
ստիպել աշխատել ծառաների հետ: Այն ժամանակ պատա-
նու քույր Սաթենիկը մոտեցավ գետափին և մի բարձր տեղ
կանգնելով՝ զիլ ձայնով այսպես ձայնեց թարգմանի բերա-
նով Արտաշեսի բանակի կողմը.

— Թեզ եմ ասում, ով այր քաջ Արտաշես, վոր հաղ-
թեցիր ալանաց քաջ ազգին, յեկ այդ պատանուն ինձ
ընծայիր, ալանների գեղաչյա արքայադուստրին: Միթե
վայել ե դյուցազուններին, վոր մի դատարկ վրեժինդ-
րության համար կյանքից զրկեն ուրիշ դյուցազունների
զավակներին կամ ստրուկների պես պահեն ու ծառայեց-

նեն նրանց և հավիտենական թշնամություն գցեն յերկու
քաջ ազգերի մեջ:

Այս իմաստուն խոսքերը լսելով՝ Արտաշեսը դուքս
վազեց բանակից և մոտեցավ գետի ափին: Նա տեսավ հեռ-
վից ալանաց աղջկան և հիացած մնաց նրա գեղեցկու-
թյունից: Վերադառնալով իր վրանը՝ նա կանչեց իր մոտ
իր դայակ Սմբատին և հայտնեց նրան: Իր սրտի ցանկու-
թյունը.

— Յես ինձ կնության պիտի առնեմ այդ գեղեցիկ և
իմաստուն աղջկան: Թող պատանին խաղաղությամբ վե-
րադառնա իր հոր մոտ, թող հավիտենական դաշինք և
ուխտ հաստատվի յերկու քաջ ազգերի մեջ:

Հավանեց Սմբատը Արտաշեսի այս մտադրությունը
և խնամախոս ուղարկեց ալանաց թագավորի մոտ:

— Տնւր ալանաց տիկին որիորդ Սաթենիկին Արտա-
շեսին կնության:

Բայց ալանաց թագավորը վեր թուավ տեղից ու բա-
ցականչեց.

— Ուստի տացե քաջն Արտաշես հազարս ի հազարաց
և բյուրս ի բյուրուց ընդ քաջազդով կույս որիորդիս ալանաց:

Այսինքն՝ վորտեղից ե տալու քաջ Արտաշեսը հազար
հազարներ և բյուր բյուրեր ալանաց քաջ ազգի կույս
որիորդի փոխարեն:

Այն ժամանակ—

«Հեծավ արի արքայն Արտաշես ի սյամն գեղեցիկ,
Յեվ հանյալ զոսկեող շիկափոկ պարանն,
Յեվ անցյալ վորպես զարծվի սրաթե ընդ գետն,
Յեվ ձգյալ զոսկեող շիկափոկ պարանն՝
Ընկեց ի մեջք որիորդին ալանաց,
Յեվ շատ ցավեցույց զմեջք փափուկ որիորդին,
Արագ հասուցանելով ի բանակն յուր»:
(Հեծավ արի արքա Արտաշեսը գեղեցիկ ու ձին,

Յեվ հանեց վոսկեող կարմրակաշի պարանը,
 Յեվ անցավ վորպես սրաթև արծիվ գետի միջով,
 Յեվ ձգեց վոսկեող կարմրակաշի պարանը,
 Փաթաթեց ալանաց որիորդի միջքին.
 Յեվ շատ ցավեցրեց փափուկ որիորդի մեջքը՝
 Արագ հասցնելով նրան իր բանակը):
 Այսպես փախցրեց Արտաշեսն իր հարսնացվին: Այսու-
 հետեւ Արտաշեսը շատ վոսկի և կարմիր կաշի ուղարկեց
 ալանաց թագավորին, վորպես վարձանք (զլիապին) նրա
 աղջկա համար և Սաթենիկի հայրը ստիպված համաձայն-
 վեց, ու մի այսպիսի հարսնակը արին, վոր յերկար ժա-
 մանակ գուսանները յերգում եյին.—

«Տեղ վոսկի տեղայը ի փեսայության Արտաշեսի,
 Տեղայը մարգարիտ ի հարսնության Սաթենկանն»:
 (Վոսկի անձրեւ եր տեղում Արտաշեսի փեսայության
 ժամանակ՝
 Մարգարիտ եր տեղում Սաթենիկի հարսնության
 ժամանակ):

Սաթենիկն յեղավ առաջինն ու ամենասիրածը Ար-
 տաշեսի կանանցից և նրա վորդիքն եյին, վոր հետո մե-
 ծամեծ գործերի պատճառ յեղան:
 Խաղաղություն և սեր հաստատվեց ալանների ու հայե-
 րի մեջ: Սաթենիկի ազգականներից մի քանիսը յեկան նրա
 հետ և բնակվեցին Հայաստանում: Արտաշեսը նողեր
 տվեց ու նախարարական ազգ կարգեց, վորպես մեծ թա-
 գուհու հարազատներին: Իսկ յերբ Սաթենիկի հոր մահից
 հետո ալանաց աշխարհում խոռվություն ընկավ և Սաթե-
 նիկի յեղբոր փոխարեն մի ուրիշը բռնի թագավոր նատեց
 Սաթենիկի յեղբորը հալածելով Արտաշեսն իր դալակ
 ունհաղթելի Սմբատ Բյուրատիանին Ալանաց աշխարհն ու-
 ղարկեց իր աներոջ վորդուն պաշտպանելու համար: Սըմ-
 զարկեց իր աներոջ վորդուն պաշտպանելու համար: Սըմ-
 զարկեց իր աներոջ վորդուն պաշտպանելու համար: Սըմ-
 զարկեց իր աներոջ վորդուն պաշտպանելու համար:



հոր գահի վրա նստեցրեց Սաթենիկի յեղբորը, իսկ նրա հակառակորդների հողերը ավերեց, իրենց ել գերեց ու բերեց Արտաշեսի մոտ: Արտաշեսը նրանց բնակեցրեց Մասիս լեռան հարավարևելյան կողմում, Շավարշական գավառում. այդ որվանից այդ գավառը վերանվանվեց Արտազ, վորովհետև այդ գերիները բերված ելին Ալանաց աշխարհի Արտազ գավառից:

Ուրիշ տեղերից ել շատ գաղթականություն բերեցին Արտաշեսն ու Սմբատը Հայոց աշխարհ և բազմաթիվ նոր նախարարություններ կարգեցին: Ամբողջ յերկիրը բազմամարդացավ, լեռները, հովիտները լցվեցին գյուղերով և ագարակներով, և վորպեսզի մեկի հողերը չխառնվեն մյուսի հողերի հետ, Արտաշեսը հրամայեց գյուղերի և ազարակների սահմանները ճիշտ վորոշել առանձին նշաններով: Տաշեցին քառակուսի քարեր, մեջները պնակաձև փորեցին և գետնի մեջ թաղեցին այդ քարերը, իսկ այդ պնակաձև փոսերի մեջ նստեցրին ուրիշ քառակուսի քարեր, վորոնք մի փոքր դուրս ելին ցցված յերկրի յերեսից: Այսպիսով բոլոր հողերը Արտաշեսը չափել արվեց:

Նա ավելին արեց: Մինչև նրա որերը հայերը չելին պարապում գիտություններով և արվեստներով և նույնիսկ չգիտեցին, թե ինչպես են բոլորում շաբաթները, ամիսներն ու տարիները, այլ ուրիշ ազգերոի հաշիվներով՝ ելին կառավարվում: Արտաշեսը սովորեցրեց ջոկել ժամանակի այդ շրջանները: Առաջ հայերն ել հյուսիսային վայրենի ժողովուրդների պես սիրում ելին ավազակությամբ և ասպատակությամբ պարապել և շատ անգամ նույնիսկ հում միս ելին ուտում: Արտաշեսը տարածեց ձկնորսական գործիքներ, մտցրեց նախագնացություն իր աշխարհի ծովակներում, սովորեցրեց ճանապարհորդել գետերով և այնտեղ վորտեղ գեռ չգիտելին հողը մշակել, սովորեցրեց յերկ-

բազործություն: Յեկ նրա հոգատարությամբ ախքան տարածվեցին գիտություններն ու արվեստները, վոր առում են՝ նրա որով Հայոց աշխարհում չեր կարելի գտնել մի թիզ անմշակ հող, վոչ լեռներում, վոչ ել դաշտերում: Ծեն ու հարուստ դարձավ յերկիրը:

Արտաշեսը բազմաթիվ վորդիք ունեցավ Սաթենիկից: Նրանց մեջ ավագագույնն եր Արտավազը: Սա մեծանալով մի քաջ և անձնահաճ մարդ դուրս յեկավ, բայց այնքան հպարտ, չարամիտ և նախանձոտ, վոր վոչ վոք չեր ուզում հավատալ, թե Արտաշեսի պես բարեգործ մարդուց կարող եր մի այդպիսի անգութ և սևահոգի զավակ ծնվել: Յերգիշները պատմում ելին, թե յերբ Սաթենիկը պառկեց և առջնիկը ծնեց, վիշապազունները գողացան մանուկ Արտավազգին, թագավորի իսկական վորդուն, և նրա փոխարեն մի դկ դրին:

Յեկ ուղիղ վոր դկի պես շատ չարություն արեց իր կյանքում Արտավազը, նա նույնիսկ ամենամոտիկ մարդկանց փառքին ու պատվին նախանձեց:

Նրա աչքի փուշն եր ծերունի Արգամը, Մուրացան իշխանը, վորի յերկրորդական բարձի և պատվի վրա նա աչք եր գցել: Նա սկսեց տակետակ գրգռել նրա դեմ իր միամիտ հորը, ասելով, թե Արգամը կամենում ե ամբողջ յերկրի վրա թագավորել, և այնքան արավ, վոր հայրը խլեց Մուրացաններից յերկրորդությունն ու տվեց իրեն՝ Արտավազգին: Սրանից հետո մի որ, յերբ Արտաշեսը գնացել եր Արգամի մոտ ճաշի, թագավորի վորդիքը կասկածեցին, թե Արգամը վրեժինորությունից դավ և սարքել իրենց հոր դեմ, աղմուկ բարձրացրին, հարձակվեցին անտիրոջ վրա և հենց հայի ժամանակ քաշքացին նրան մազերից: Իսկ Արտաշեսը՝ սաստիկ գրգռված՝ վերադարձավ Արտաշատ և հրամայեց իր վորդի Մաժանին մեծ գնդով գնալ, ապերել Մուրացանների կալվածները: Յեկ Մաժանը

Մուրացաններից շատերին կոտորեց, պալատներն այրեց,
գլուղերը վոաի հետ հավասարեցրեց և իր ձեռքը գցելով
Արդամի հարձին, վոր մի շատ չքնաղ աղջիկ եր, բերեց
նվիրեց իր հորը. թեև մի յերկու տարուց Արտաշեսը հաշտ-
վեց Արդամի հետ և վերադարձրեց նրան կալվածները,
բայց հարձին այլևս բաց չթողեց:

Արտավազդը չբավկանագավ այսքան չարություն-
ներով. Նա ուզեց գրավել Նախիջևանը և առհասարակ Մու-
րացանների այն բոլոր բերդերն ու գյուղերը, վոր գտնվում
ելին Արաքսից դեպի հյուսիս, և իր ժառանգական կալ-
վածները դարձնել: Այս բանը չկարողացավ հանդուրժել
Արդամի վորդին և զենքը ձեռքին ընդդիմացավ թագավորի
վորդու ձգտումներին, բայց կովի մեջ Արտավազդը հաղթեց
վորդու ձգտումներին, հաղթեց նաև ծե-
և կոտորեց բոլոր Մուրացաններին, չինայեց նաև ծե-
ը ըունի Արդամին, ու գրավեց նրանց բոլոր հողերը: Վոչ վոք
կենդանի շմաց այդ փառագոր նախարարությունից,
կենդանի շմաց այդ փառագոր նախարարությունից,
բացի մի քանի աննշան և կրտսեր մարդկանցից, վորոնք
բացի նրանով փրկվեցին, վոր փախան, ապավինեցին Ար-
տաշեսին՝ թագնվելով նրա պալատում:

Արդամից հետո հերթը յեկավ Սմբատ Բյուրատյան
սպարապետին: Նա նոր եր հաղթությամբ վերադարձել
պատերազմից, ապատամբ ազգերից բազմաթիվ գերիներ
պատերելով: Արտաշեսը ցանկացավ նրան արժանավայել կեր-
բերելով: Արտաշեսը ցանկացավ նրան ամբողջ ավարը և պարզեց
պով վարձատրել. բախշեց նրան ամբողջ ավարը և պարզեց
արքունի կալվածների մի մասը: Այս բանի վրա նախան-
արքունի կալվածների մի մասը: Այս բանի վրա նախան-
արքունի հաղցավ նրա մեջ—
ձեց Արտավազդը, և մի չար միտք հղացավ նրա մեջ—
ձեց Արտավազդը, և մի չար միտք հղացավ նրան փրկողին,
սպանել իր հոր հավատարիմ դալակին, նրան փրկողին,
նրան հալրական գահի վրա բազմեցնողին: Յերբ նրա այս
մտադրությունը բազվեց, սաստիկ վշտացավ Արտաշեսը:
Բայց Սմբատն ինքը հոժար կամքով տեղի տվեց, չուզեց
մրցել այն արքայորդու հետ, վորը հոր մահից հետո պիտի
մրցել այն արքայորդու հետ, թողեց նրան սպարապետությունը և
թագավոր նստեր, թողեց նրան սպարապետությունը

առհասարակ հայոց բոլոր զորքերի հրամանատարությունը,
վորին անպես փափագում եր Արտավազդը, ու իր հետ
վերցնելով իրեն նվիրած գերիներին՝ հեռացավ դեպի հա-
րավ, կորդրիք (Տմորիք), Ասորեստանի սահմաններից վոչ
հեռու, վորովհետև ծերության հասակում այդ կողմերից
կին եր առել և շատ եր սիրում այդ կնոջը:

Այսպես կարծես Արտավազդին իրեն հավասարը չուներ
չայաստանում. նրանն եր յերկրորդությունը, նրանն եր և
սպարապետությունը: Բայց այդ գրգռեց նրա յեղայրների
նախանձը: Նրանց կանայք ամաշեցնում եին իրենց ա-
մուսիններին, թե ինչպես տարրորեն, տղամարդկանց
տնվայել յերկշոտությամբ թույլ տվին իրենց հորն ամբողջ
իշխանությունը տալ Արտավազդին: Այս ժամանակ յեղ-
բայրներն ստիպեցին Արտաշեսին իրենց ել բաժին
հանել իշխանությունից, պատիվներից և կալվածներից, և
Արտաշեսը իր վորդի Վրույրին, վոր մի իմաստուն
և բանաստեղծ մարդ եր, կարգեց հաղարապետ ու
նրան հանձնեց արքունի տան բոլոր գործերը, իսկ Մա-
ժանին նշանակեց աստվածների հայր Արամազդի քրմա-
պետ՝ Անիում: Միննույն ժամանակ նա զորքի իշխանու-
թյունը չօրս մասի բաժանեց. արևելյան զորքը և արևելյան
կողմանապահությունը նա թողեց Արտավազդին, իսկ արև-
մտկանը հանձնեց Արտավազդի ամենասիրելի յեղորը՝ Տի-
րանին, հարավային կողմանապահ հաստատեց նա Սմբատ
Բյուրատյանին, իսկ հյուսիսային՝ իր Զարեհ վորդուն:

Թեև այսպիսով զորքի իշխանությունը բաժանվեց նաև
արքայորդիների մեջ, բայց յեթե Սմբատը չլիներ, հա-
զիկ թե կարողանային նրանք իրենց անփորձ տեղովը
պաշտպանել և ապահով պահել Հայոց աշխարհը: Սմբատն
եր, վոր ոգնեց Արտավազդին և Տիրանին, յերբ սրանք
դնացել եին ապատելու իրենց յեղայր Զարեհին, վորն իր
անշնորհը թյան պատճառով գերի յեր ընկել վրացոց թա-

գավորի ձեռքը և բանտարկվել եր Կովկասյան լեռներում։ Սմբատն եր, վոր մի փոքր հետո Բասենի հովտում ոգնեց թագավորի վորդիներին և հաղթություն տարավ հոռմայեցիների դեմ։ Վորովինեան, յերբ արեմուտքում, հոռմեական կայսրության մեջ, սկսվել եյին խոռվություններ, Արտաշեալ ցանկացել եր ոգտվել այդ հանգամանքից և մերժե, եր հարկ վճարելը։ Հոռմայեցիք զորք եյին ուղարկել և այդ զորքը քշելով Տիրանին և նրա արևմտյան գունդը՝ հմանել եր մինչև Բասենի հովիար։ Այստեղ ոգնության յեկան Արտավազզն ու Զարենս իրենց արևելյան և հյուսիսային գնդերով։ Լավ ե, վոր Սմբատը ժամանակին հասավ, թե չե հայոց զորքը պարտվելու վրա յեր։ Նա մեջ ընկնելով, չնայած իր խոր ծերությանը՝ յերիտասարդի պես կարգավորեց զորքերը, վտանգից ազատեց արքայորդիներին, հաղթեց հոռմայեցիներին ու հալածեց նրանց նաև Հայաստանի սահմաններից դուրս։

Այս հաղթությունից հետո հոռմայեցիների դեմ ապրատամբեցին նաև պաղեստինացիք և յեղիպտացիք, մինչև վոր մի նոր կայսր նատեց Հռոմում։ Նա նվաճեց յեղիպտացիներին և պաղեստինացիներին և արշավեց պարսիկների վրա, վորոնք հայերի հետ միացած՝ հարձակվել եյին և ասպատակում եյին հոռմայեցոց յերկրները։ Արտաշեալ տեսավ, վոր դժվար թե կարողանա հաղթել մի ազգպիսի հղոր կայսրի, մեծամեծ ընծաներով շտապեց նրա մոտ, վճարեց նախորդ տարիների հարկերը և նրանից թողություն ստանալով վերադարձավ Հայոց աշխարհը։

Յերբ կայսրը վերադարձավ պարսից պատերազմից, նրա մոտ ծածուկ գնաց Մաժան արքայորդին, Արամազզի քրմապետը։ Նա մատնություն արեց և ամբաստանեց իր յեղայրներին։

— Տեր արքա, — ասավ նա, — իմացած յեղիր, վոր յելթե չհեռացնես Արտավազզին և Տիրանին և հայոց զորքի

հրամանատար չնշանակես Զարեհին, առանց դժվարությունների, անարդել կերպով չես ստանալու հարկերդ մեր յերկրից։

Մաժանն ատում եր Արտավազզին Սմբատի պատճառով, վորովհետև Սմբատը ժամանակով նաև իր դայակն եր յեղեր, իսկ Տիրանի գեմ թշնամանը ուներ նրա համար, վոր կարծում եր, թե նրա վերացումով իրեն կհանձնվի արևմտյան կողմնապահությունը և այլպիսով ինքը կլինի թե Անիի քրմապետ և թե արևմտյան զորքի հրամանատար։

Բայց կայսրը ականջ չդրեց նրա խոսքերին և ձեռնունայն արձակեց իր մոտից։ Արտավազզն ու Տիրանն իմացան նրա մատնությունը և վորսի ժամանակ դարանակալությամբ սպանեցին նրան։ Յեղայրասպանները տարան թաղեցին նրան Սմբատի կալվածքում, Արամանիի ակունքի մոտ, Բագնաց ավանում կամ Բագարանում, վորպես քրմապետի։ Մաժանի գերեզմանի վրա վերջում մի մեհյան կանգնեցվեց. այստեղ եր տոնվում հեթանոս հայոց նոր տարին՝ նավասարդը։

Այսպես Արտավազզն անգիտեց իր հարազատ յեղբոր արյունը, և յեթե դլուխ չեր բարձրացնում իր հոր դեմ, պատճառն այն եր, վոր դիտեր, թե ինչպիսի անսահման սիրով ժողովուրդը և նախարարները սիրում եյին Արտաշես աշխարհաշեն թագավորին։ Բայց նա չկարողացավ իր անհագուրդ փառասիրությունը զսպել և վերջը հոր փառքին ել նախանձեց։

Յեկ այդ յեղավ այսպես։

Պաղեստինացիք և ասորիները կրկին ապստամբեցին Հռոմի դեմ. պարսիկներն ել նորից սկսեցին իրենց թըշնամությունը։ Միայն Արտաշեալ մնաց հավատարիմ հոռմայեցիներին։ Կայսրը յեկավ Պաղեստին, սաստեց այնտեղի ապստամբներին և մեծ զորքով ուղեղորդեց Ասորեստան, իսկ հայոց թագավորին հրամայեց զնալ պարսիկների դեմ։

Յեվ ահա, յերբ Արտաշեսը հասել եր Մարանդ կաւ
վառի Բակուրակերտ ավանը, ծանը կերպով հիվանդացավ
այնտեղ։ Մի վոմն Աքեղո, մի շողոքորթ, կեղծավոր և խա-
բերա նախարար Աքեղյան տոհմից, սկսեց աղաչել թագա-
վորին, վոր թույլ տա իրեն գնալ Յերիզա ավանը, լուսնի
աստվածուհու՝ Անահիտի մեհյանը, աղոթելու այնտեղ և
խնդրելու նրանից առողջություն և յերկար կյանք իր արև
թագավորի համար։

— Նա յե, Անահիտ մեծ տիկինը, մեր ազգի փառքն
ու կեցուցիչը, նա յե բարերար ամենայն բնության, նրա-
նով ե, վոր ապրում ե և կենդանություն ունի յերկիրն
չայոց։

Յեվ Արտաշեսը թողեց Աքեղյին գնալ Յերիզա ա-
վանը, բայց մինչև նրա վերադարձը վրա հասավ Արտա-
շեսի մահը։ Ոտար աշխարհում մեռնելիս՝ Արտաշեսը կա-
րոտով հիշում եր իր սիրելի հայրենիքը, մտաբերում եր նրա
գյուղերից և քաղաքներից արշալույսին բարձրացող ծուխը
և նավասարդի ուրախ առավոտը, մտաբերում եր իր աշ-
խույժ վորսերն ու թագավորական տոնախմբությունները
և ասում եր,

«Վ՞ն տայր ինձ զծուխ ծխանի
Յեվ զառապոտն նավասարդի,
Զվագելն յեղանց և զվագելն յեղջերուաց,
Մեք փող հարուաք և թմբկի հարկանեաք,
Վորպես որեն ե թագավորաց»։

(Ո՞վ կը տա տեսնեմ ծխանի ծուխը
Յեվ նավասարդի առավոտը,
Յեղնիկների վազվզելն ու յեղջերուների թոչկոտելը։
Մենք փող եյինք փշում և թմբուկ եյինք դարկում,
Ինչպես թագավորների սովորությունն ե)։
Սուգ ու շիվան բարձրացավ մեռնող Արտաշեսի շուրջը։
Սիրելի կանայքը, հարճերն ու մտերիմ ծառաները կոծում



Ելին. «Ել ինչացու յե մեր կյանքը, յեթե Արտաշեսը չի ապ-
բելու», և իրենց կոտորում եյին նրա անկողնի մոտ:

Մանր եր Արտավազդի համար տեսնել այս ամենը, և
նա սրտնեղությունից բացականչեց.

«Մինչ դու գնացեր և գերկիրս ամենայն ընդքեզ տարար,

«Ես ավերակացս վնրպես թագավորեմ».


(Ահա դու գնացիր և ամբողջ յերկիրը քեզ հետ տա-
րար, յես ավերակների վրա ինչպես թագավորեմ):

Այս ժամանակ հայրն անիծեց նախանձու վորդուն
և ասաց.

«Յեթե դու յորս հեծցիս
յԱզատ ի վեր ի Մասիս,
զՔեզ կալցին քաջք,
Տարցին յԱզատ ի վեր Մասիս,
Անդ կացցես և զլույս մի տեսցես»:

(Յերբ վորսի յենես Ազատ Մասիսի վրա, քաջքերը
բռնեն քեզ և տանեն վեր, Ազատ Մասիսի վրա. այնտեղ
մնաս և լույս չտեսնես):

Արտաշեսի թաղումը շատ հանդիսավոր եր: Դագաղը
վոսկեղեն եր, միջի բարձն ու անկողինը՝ բեհեղից, հազած
ուներ վոսկեթել հանդերձներ, գլխին թագը, իսկ վոսկե
զենքը կողքին դրված: Դագաղի շուրջը գնում եյին նրա
վորդիքն ու բազմաթիվ ազգականները, զինվորական պաշ-
տոնյաներն ու նախարարներն իրենց գնդերով և վաշտերով,
կարծես կովի դաշտ գնալիս լինեյին: Առջեկց պղնձե փո-
ղեր ելին փչում, իսկ յետևից գալիս եյին սևազգեստ ձայ-
նարկու կույսեր և լալկան կանայք. նրանք մի առ մի հի-
շում եյին Արտաշեսի մեծ գործերը և բարձր ձայնով
խմբովին վողբում եյին նրա կրուստար: Ամենքից հետո
գնում եր խուռն ուամիկ բազմությունը: Այսպես տարան
թաղեցին Արտաշեսին, և նրա բաց գերեզմանի մոտ նորից
շատերը կամավոր մահով վերջ դրին իրենց կրանքին և թաղ-
վեցին նրա հետ:



408 448.

Արտաշեսի մահից հետո թագավորեց Արտավազը: Նա
քշեց Այրարատից իր բոլոր յեղբայրներին, վոր նրանցից
վոչ վոք չբնակվի արքայի կալվածներում. միայն Տի-
րանին պահեց իր մոտ, վորպես իր փոխանորդի, վորով-
հետև ինքը վորդի չուներ: Յեվ ահա մի որ, անցնելով
Արտաշատի կամրջից, Մասիսի մոտ նա կինճ և վայրի եղ
եր վորսում, հանկարծ նա իր ձիով մի անդունդ գլուխեց
և անհետացավ:

Ասում են, թե քաջքերը նրան կալանավորել ու բան-
տարկել են մի մուժ այրի մեջ: Ասում են՝ նրա ձեռներն
ու վոտները ամուր շղթայված են, յերկու հավատարիմ
շուն շարունակ կրծում են յերկաթե շղթաները, և նա ճիդ
ե թափում փշութու շղթաները, դուրս նետվելու ապա-
ռաժների ծոցից ու վերջ տալու ամբողջ աշխարհին: Բայց
դարբինների կռանների զարկերից զորանում են նրա շրդ-
թաները և նա չի կարողանում դուրս պլրծնել Մասիսի
միջից: Մինչև այսոր ել կիրակնամուտին դարբինները յե-
րեք կամ չորս անգամ զարկում են սալին, վոր պնդանան
Արտավազդի շղթաները:

Յեվ վայ մարդկությանը, յեթե նա ջախջախեց իր
կապանքները և դուրս պլրծավ լույս աշխարհ:

29935

ՀՀ Ազգային գրադարան



NL0393231

29935

5.0604